

ՎԵՀԱՓԱՌ ԼԱՅՐԱՊԵՏԸ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

Ժամանում Բուխարեստ

Հունիսի 17-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ Տ. Հուսիկ և Տ. Տիրայր եպիսկոպոսների և Տ. Գևորգ վարդապետի, ժամանում է Բուխարեստի Բանեասա միջազգային օդանավակայանը:

Հայոց Հայրապետին անձամբ դիմավորում են Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու Պետտրին Սրբուքյուն Տ. Ժուստինիան Սրբազան Պատրիարքը, պատրիարքական փոխանորդ Տ. Անտիմ եպիսկոպոսը, Ս. Սինոդի բարձրատիճան անդամներ, Պատրիարքարանի խորհրդական հայրերը, աստվածաբանական ակադեմիայի վերատեսուչը և մայրաքաղաքի մի քանի տասնյակ ուսանող քահանա հայրեր:

Օդանավակայանում ներկա են նաև, հանուն ուսանող պետական իշխանութանց, արտաքին գործոց նախարարությունից ամբաստորդ Դիոնիսիե Յոնեսկուն, Կրոնական դավանութանց պետ պրոֆ. Դումիտրու Դոկաբուն իր խորհրդականներով:

Հայոց Հայրապետին ողջունելու համար այստեղ են ժամանել նաև սովետական դեսպանատան խորհրդական Վ. Ա. Սելիկեր և դեսպանատան քարտուղար Դեյառլիեր:

Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհաբեր ժամանումը ջերմորեն ողջունում են Ռումինիայի հայոց հոգևորական դասը հանձին Տ. Զարեհ արեղա Պարոնյանի, Տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյանի, Տ. Մեսրոպ քահանա Պարոնյանի, Ռումինիայի հայոց թեմական խորհրդի անդամներ, թեմական խորհրդի ատենապետ և համալսարանի

դասախոս բժիշկ Գրիգոր Բամբուֆեյանի գլխավորութեամբ, եկեղեցական վարչութանց և թաղական խորհուրդների ներկայացուցիչներ և խումբերամ հայ հավատացյալներ:

Նորին Ս. Օծությանը ջերմորեն դիմավորում է նաև ժանոթ մտավորական և վաստակավոր բանասեր Հ. Ծ. Սիրունին:

Հայոց Հայրապետին օդանավակայանում ողջունում են նաև Բուխարեստում Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու հոգևոր հովիվ Կորաեովը՝ հանուն Ամենապատիվ Տ. Կիրիլ Պատրիարքի և Սոֆիայի Ռումեն Եկեղեցու հովիվ Իռան Քրիստեան:

Ժողովրդական խանդավառ ծափերի տարափի տակ, սիրով և կարոտով ողջագործվում են երկու Հայրապետները՝ Նորին Ամենապատվութեամբ Տ. Ժուստինիան Պատրիարքը և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ը, և փոխանակում բարի գալստյան և ողջույնի խոսքեր:

Օդանավակայանի պաշտոնական ընդունելութանց դահլիճում փոքր հանգստից և հյուրասիրությունից հետո, երկու Հոգևոր Պետերը իրենց շքախմբով հանդիսավորապես առաջնորդվում են Բուխարեստի Ռումինական Պատրիարքարանի Մայր Եկեղեցին, ուր մեծ թվով համախմբված են ուսանող և հայ հավատացյալներ:

Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով և զանգերի ավետավոր ղողանջի տակ ու երգախմբի «Ton Despotin» մաղթերգի վեհ հնչյունների տակ առաջնորդվում է դեպի Ս. Սեղան, խոնարհվելու Ռումեն Եկեղեցու մեծ Սուրբ Դիմիտրիե Բասաբարովի նվիրական աճյունների առաջ:



ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ Տ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ ՌՈՒԽԵՆ
 ՕՐԹՈՂՈՐՏ ԵԿԵՂԵՑՈՒ



Վեհափառ Հայրապետը, Ժուստինիան Պատրիարքը և Դավանանքների բաժանմունքի պետ պրոֆ. Դ. Դոկարուն Բուխարեստի օդանավակայանում

Այնուհետև երկու Հայրապետները օրհնում են ժողովրդին, որից հետո սկսվում է հանդիսավոր զոհարանական մաղթանքը, հանդիսադրությամբ պատրիարքական փոխանորդ Տ. Վիսարիոն եպիսկոպոսի:

Սրբազան արարողության ավարտին, խոսք է առնում Ամենապատիվ Տ. Ժուստինիան Սրբազան Պատրիարքը, ողջունելով Հայոց Հայրապետի ներկայությունը, իբրև թանկագին հյուրը Ռումեն Օրթոդոքս եկեղեցու:

Նորին Ամենապատվությունը ջերմ խոսքերով նշում է, որ Հայոց Հայրապետն իր ծննդով, մտավոր պատրաստությամբ և դաստիարակությամբ զավակն է ուսման հայրենիքի, որ նա շատ բարի հիշատակներ է թողած ուսմանների մեջ այն տասնյակ տարիների ընթացքում, երբ Վազգեն Ա Կաթողիկոսը հոգևոր առաջնորդն էր Ռումինիայի հայոց թեմի, մինչև 1955 թվականը, երբ կոշիկից բազմելու Հայոց Հայրապետական-նվիրական Աթոռի վրա:

Նորին Ամենապատվությունը նույնքան ջերմ հոգով խոսում է Հայ և Օրթոդոքս եկեղեցիների պատմական եղբայրական հարաբերությունների մասին և ի մասնավորի ուսման և հայ ժողովուրդների դարավոր բարեկամական կապերի և գործակցության մասին, եղրակացնելով, թե մեր օրերին առա-

վել ևս լայն հեռանկարներ են բացվում առավել մերձեցման և աշխատակցության եկեղեցիների միջև էկումենիկ ոգով, ինչ որ համապատասխանում է ժողովուրդների բարեկամության և աշխարհի խաղաղության ջանքերի սրբազան իղձերին:

Վեհափառ Հայրապետը Սրբազան Պատրիարք Հոր ջերմ խոսքերին պատասխանում է խոր հուզումով համակված.

«Եղիցի լույս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր»:
«Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տեր» (Սաղմ. 2Թ 17):

Ամենապատիվ Պատրիարք Ժուստինիան, սիրեցյալ եղբայր Մեր ի Զրիստոս.

Անհուն ուրախությամբ ընդունեցինք Ձերդ Սրբության եղբայրական հրավերը և ահա այսօր ուրախությամբ ոտք դրեցինք մեզ այնքան սիրելի ռումեն հայրենիքի հողի վրա և այս լուսավոր պահին գտնվում ենք այս սուրբ և պատմական տաճարի մեջ, բերելով Ձեզ բոլորիդ Հայաստանից, սուրբազան Արարատի երկրից, մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, սիրով լի Մեր ողջույնը և վկայությունը ամենաջերմ մտածումների և զգացմունքների Հայ Եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի, ինչպես նաև անձամբ Մեր կողմից:

Մեր այս հանդիպումը Մենք նկատում ենք Վի աստվածային շնորհ իսկապես, և խորապես



Ռուսարեստի օդանավակայանում պրոֆ. Դ. Դոկարուն ողջունում է Վեհափառ Հայրապետին

համոզված ենք, թե մեր այս ճանապարհի վրա պիտի ծլեն ու ծաղկեն բարի արդյունքներ և առատ արդյունքներ: Եվ այսպիսով առավել պիտի կորանան ու ամրապնդվեն մեր քույր եկեղեցիների միջև փոխադարձ գնահատանքը, քրիստոնեական եղբայրությունը և գործակցությունը:

Մեզ համար իրավ երջանկություն է վերստին տեսնել ռումեն հայրենիքը, որից բաժանվեցինք 10 տարի առաջ և գտնվել կրկին անգամ ռումեն եղբայրների մեջ և լսել մեր շուրջ ռումեն քաղցր և վճիտ լեզուն:

Այս բոլորի համար, Ամենապատիվ Եղբայր Մեր, Երախտապարտ ենք անկեղծորեն Ձեզ:

Ժամանակները, ուր ապրում ենք, մեր հոգևոր առաքելության գիտակցությունը, ինչպես նաև խորունկ իմաստն ու պատգամը մեր Փրկչի Ս. Ավետարանի, մեզ մղում են ավելի և ավելի մերձենալ միմյանց, իբրև քրիստոնյա մարդիկ և եկեղեցիներ, միանալ եղբայրական ճշմարիտ սիրով և միացյալ ուժերով աշխատել, որպեսզի իրագործվեն Աստուծո պատվիրանները երկրի վրա և այս աշխարհի մեջ, տակավին այնքան տառապող ցավերով, հակամարտություններով և մանավանդ համաշխարհային նոր պատերազմի սարսափներով:

Կարծում ենք, թե մեր պարտքն է և մեր առաքելությունը շարունակել բարոյել հետզհե-

տե առավել հոգևոր թափով խաղաղությունը երկրի վրա և բարի հաճությունը մարդկանց և ազգերի միջև:

Սիրեցյալ Պատրիարք Եղբայր Մեր, տակավին այն օրերից, երբ Ռումինիայի հայերի առաջնորդն էինք, տևապես Ձերոջ Սրբության կողքին գտնվեցինք, ոգեշնչված լինելով միշտ անկեղծորեն, մաքուր սիրով դեպի Ձեր անձը և դեպի մեր եկեղեցիների գործակցությունը, ինչպես նաև ոգեշնչված էինք ծառայելու խաղաղության փրկարար և սուրբ դատին: Այժմ անչափ երջանիկ ենք վկայությունը բերելու Մեր նույն զգացմունքների և հույզերի, իբրև առաջին սպասավորը Հայոց Սուրբ և Առաքելական Եկեղեցու:

Խնդրում ենք ընդունել Մեր ջերմ մաղթանքները, որպեսզի բազում տարիներ ապրեք իբրև հովվապետ, արդյունավետ գործունեությամբ, Ռումեն Սուրբ Եկեղեցու և բարեպաշտ ժողովրդի իբր Հովվապետ: Ձի ահա երկու տասնյակ տարիներից ի վեր Ռումեն Օրթոդոքս Եկեղեցին, Ձեր իմաստուն ղեկավարության ներքո, լուսավոր իրագործումներով լի, աճում է և բարգավաճում, հետզհետե առավել ոգեշնչումով և հոգևոր հեղինակությամբ, առաջնակարգ տեղ գրավելով ոչ միայն օրթոդոքս եկեղեցիների ծոցում, այլև ազգերի քրիստոնեական եկեղեցիների շարքում:

Թո՛ղ Աստված Ձեզ օգնի, որպեսզի ապրեք մինչև խոր ծերություն և տեսնեք հաջողությամբ պակվումը Ձեր բոլոր սուրբ իղծերի և շինարար ծրագրերի, ի փառս Ռուսեն Օրթոդոքս Եկեղեցու և ի հոգևոր մխիթարություն Ձեր հավատացյալ վավակների, նաև հուրախություն Մեզ, որ Ձեզ գնահատում ենք և այսօր ողջագուրում Ձեզ, եղբայրական անարատ սիրով:

Այս հանդիսավոր պահին, Մեր պարտքն ենք համարում հայտնելու Մեր հարգանքն ու երախտագիտությունը հանդեպ պատվարժան կառավարության Ռուսեն Ժողովրդական Հանրապետության, որը դյուրացրեց մեր այս այցելությունը, բացառիկ սիրալիրությամբ: Կմնանք ջերմապես աղոթող Ռուսեն Ժողովրդական Հանրապետության խաղաղության և բարգավաճման համար և կմաղթենք նրա բարձր դեկավարներին շինարար և ստեղծարար աշխատանքի անսպառ ուժեր, ի փառս ազնիվ և չարքաշ ռուսեն ժողովրդի:

«Յոյց մեզ, Տէ՛ր, փողորմութիւնս քո և փերկութիւնս քո տուր մեզ» (Սաղմ. 2Գ. 8):

Այժմ և հավիտյանս: Ամեն»: Սուչն խոսքը, ինչպես և բոլոր հետագա իր արտասանած ճառերը և խոսքերը զանազան առիթներով ռումինական տաճարներում, վանքերում և ճաշկերույթներին, Վեհափառ Հայրապետն արտասանում է ռումիններեն լեզվով:

Եկեղեցական արարողությունից հետո, երկու Հայրապետները հանդիսավորապես առաջնորդվում են Պատրիարքարանի պալատը, որտեղ Վեհափառ Հայրապետին հատկացվում է մի ամբողջ հարկաբաժին, իր շքախմբի անդամներով մնալու մինչև Ռումինիայից նրա մեկնումը:

Կարճատև հանգստից հետո, Ամենապատիվ Ժուստինիան Սրբազան Պատրիարքի և Անտիմ եպիսկոպոսի ուղեկցությամբ, Հայոց Հայրապետը այցելում է Պատրիարքարանի պալատի բոլոր սրահները և ծանոթանում նկարչական ու քանդակագործական արվեստի թանկարժեք գործերին, որոնցով գեղեցկորեն և բարձր ճաշակով զարդարված են նրանք:

Վեհափառ Հայրապետն իր հիացմունքն է հայտնում մանավանդ Պատրիարքարանի քանդակազարդ կահույքի հանդեպ, որը պատրաստվել է եկեղեցական յուրահատուկ ոճով Ռումեն Պատրիարքարանի հատուկ արհեստանոցներում վերջին 20 տարիների ընթացքում:

Ժամը 1.30-ին, շափազանց ջերմ մթնոլորտում, Վեհափառ Հայրապետի պատվին, տեղի է ունենում ճաշկերույթ Պատրիարքարանի պաշտոնական ճաշարահում:

Վեհափառ Հայրապետը Բուխարեստի հայոց Ս. Հրեշտակապետաց եկեղեցում

Հունիսի 17-ին, հիեզարբթի, հայ հավատացյալների խումբերամ բազմությունը լցրել է հայոց եկեղեցին և շրջափակել: Բոլորը հուզումով և անհամբեր սպասում են Հայոց Հայրապետի ժամանմանը:

Ժամը ուղիղ 5-ին, Ռումեն Պատրիարքարանից ժամանում է Վեհափառ Հայրապետն իր շքախմբով, որին մաս են կազմում նաև ռումեն հոգևորականների մի խումբ, զխավորությամբ Տ. Անտիմ եպիսկոպոսի և Պատրիարքարանի խորհրդական Հայր Օլիմպ Բաշուլայի:

Ձանգերի դողանջի տակ, «Հրաշափառ»-ով ընդունվում է Վեհափառ Հայրապետը և հայ ու ռումեն հոգևորականների թափորով առաջնորդվում Ս. Սեղան:

Ներկա հավատացյալները համակված են խոր հուզումով և համարյա բոլորի նայվածքների մեջ շողում է արցունքը, իբրև դերագույն վկայություն սիրո և կարոտի, դեպի Հայոց Հայրապետը, դեպի նախկին առաջնորդը Ռումինիայի հայոց թեմի:

Հայտնապես հուզված է նաև ինքը, Հայոց Հայրապետը, որ հազիվ կարողանում է զսպել իր արտասուքը:

Եկեղեցական արարողության ավարտին, խոսք է տանում թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր եպիսկոպոսը և ողջունում է Վեհափառ Հայրապետի շնորհաբեր ներկայությունը:

«Վեհափա՛ռ Տեր.

Հանուն Ռումանիո Ձեր հոտին և ազգային-եկեղեցական մարմիններուն, կողջունեմ Ձեր շնորհաբեր այցելությունը, կըր կուգաք գոհացում տալու մեր տասը տարիս ի վեր սնուցած կարոտին, սիրույն: Ամեն անգամ մեր աչքերը կըրաճրանային այս Ս. Սեղանի արձանագրության՝ «Խնդրեցէք և տացի Ձեզ», և մեր մեծագույն խնդրանքը կըլլար Աստուծան՝ Ձեզ անգամ մը ևս տեսնել այս Սեղանին առջև, լսել Ձեզ և ստանալ Ձեր հայրական օրհնությունը և շունչը վերածնած Մայր Հողին:

Ձեզ այստեղ կողջունենք ուրեմն նախ իբրև ազգիս Վեհափառ Հայրապետը, որ կուգա իր հայրապետական օրհնությունները՝ բաշխելու իր հոտին, երկրորդ՝ ողջունելու հանձին Ձեզ իր երբեմնի առաջնորդին, որ այնքան զուրգուրանքով հովվեց տալու հիշատակներ այս թեմը, և որ այնքան բաղտր հիշատակներ է ձգած ամեն մեկու սրտին մեջ: Ձեզ կողջունենք նաև որպես արժանավոր մեկ զավակը ռումեն հայրենիքին, ուր ծնաք, դաստիա-



Բուխարեստի հայոց Ա. Հրեշտակապետաց եկեղեցում

րակվեցաք, ապրեցաք և գործեցիք ավելի քան 40 տարի: Այս թեմը իր կարգին հոգևին կապված է Ձեր անձին, Ձեր կյանքին և Ձեր գործունեության: Վեց դարեր հայ գաղութը անցուց այս հյուրընկալ ափերուն վրա, իր Մայր Եկեղեցիին շուրջը հավաքված, և եթե ժամանակները և պարագաները տակավ չնսրացուցին զայն, բայց շիրցան բան մը խորտակել այն հավատքեն, որ անորը եղավ, այսինքն անսակարկելի նվիրումը դեպի իր պապերուն սրբազան ավանդները, իր Մայրենի Եկեղեցին, սերը դեպի հայրենիքը, մինչև այսօր ալ իր փոքրացած թվին հակառակ:

Այս թեմը, մեր ժողովուրդը կմնան ջերմությամբ կապված Լուսավորչի Աթոռին և անոր արժանավոր Գահակալին:

Վեհափա՛ն Տեր.

Դուք գիտեք նույնպես, որ Հայ Եկեղեցին այս հյուրընկալ երկրին մեջ կվայելն հոգածությունը և պաշտպանությունը ժողովրդական Ռումանիո իշխանությանց, ինչպես և հայրական սիրալիր վերաբերմունքը Ռումեն Օրթոդոքս Եկեղեցվո և անոր արժանավոր Գահակալին, հանձին ժուռտինիան Պատրիարքին: Մեր համայնքը շնորհապարտ է այսօր անոնց այն երջանիկ առիթին համար,

որ պատեհություն տվավ մեզի Ձերդ Վեհափառությունը մեր մեջ ունենալու:

Կհայցենք Ձեր հայրական օրհնությունը այս հյուրընկալ երկրի և անոր ազնիվ ու բարի ժողովուրդին, պետական, եկեղեցական իշխանությանց համար:

Բարո՛վ եկաք, Վեհափա՛ն Տեր, Ձեր տունը, Ձեր ժողովուրդին մեջ:

Բարի գալստյան այս խոսքերից հետո, Վեհափառ Հայրապետը հուզումնալից շեշտերով իր հայրապետական օրհնությունն ու ողջույնն է տալիս իր ժողովուրդին, Ս. Էջմիածնից և Հայոց աշխարհից:

«Անհուն կարոտով եկանք դեպի Ձեզ, սիրելիներ՝ և հարապատներ՝ Մեր, ջերմագին և բարի մաղթանքներով պեղուն:

Եկանք տեսնելու Մեր ծննդավայրը, ուումեն հայրենիքը, ուր ապրեցինք ավելի քան 40 տարի, մի ամբողջ կյանք, ձեզ հետ միասին, սերտ և անքակտելի կապերով կապված այս բարի և հյուրընկալ հողին և ուումեն եղբայր ժողովուրդին:

Ճշմարիտ ասում ենք ձեզ, թե Մենք անսահման սեր ունենք դեպի ձեզ, դեպի ուումինահայ Մեր վավակները և դեպի այս երկիրը: Եվ Ս. Էջմիածնի սեղանների առաջ, միշտ աղոթող ենք խաղաղությանը և երջանկությանը համար

ռուսներն ժողովրդի, Ռուսներն Օրթոդոքս Եկեղեցու և նրա բավականատակ Հովվապետ Նորին Ամենապատվություն ժուստինիան Պատրիարքի, Մեր հին և սիրելի Եղբայրն ի Զրիստոսս:

Վեհափառ Հայրապետը, ոգեկոշելուց հետո մի քանի պահեր անցյալից և հիշելուց հետո 1958 թվականին ժուստինիան Պատրիարքի այցը Ս. Էջմիածին, հայտնում է իր իղձը, առավել խորացնելու և ամրապնդելու եղբայրական, դարավոր կապերը Ռուսներն և Հայ եկեղեցիներին և երկու ժողովուրդներին միջև:

Ապա հոգևոր դասը և ամբողջ ժողովուրդը միաբերան երգում են «Հայր մեր»-ը:

Մույն առաջին հուլիզ հանդիպումը վերջ է գտնում Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և աջահամբույրով:

Բոլոր ներկաներն անխտիր, կարոտի և սիրո բացականչություններով, մոտենում են Վեհափառ Հայրապետին, երկյուղածությամբ և հարգանքով առնելով նրա Ս. Աջը:

Եկեղեցական արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը բարձրանում է առաջնորդարան, ուր տեղի է ունենում հյուրասիրություն:

Այստեղ Ս. Տիրայր եպիսկոպոսը ողջունի խոսք է ուղղում Ս. Անտիմ եպիսկոպոսին, վեր հանելով հին բարեկամությունը Վեհափառ Հայրապետի և նրա միջև, Նորին Ս. Օծության Ռուսինիայի առաջնորդության շրջանին:

Պատասխանելով, Ս. Անտիմ եպիսկոպոսը իր անսահման գոհունակությունն է հայտնում, որ ինքը ներկա եղավ այն հուզումնալից պահերին, երբ այնքան բացառիկ սիրո զեղումներով, մայրաքաղաքի հայ հավատացյալները դիմավորեցին իրենց Գերագույն Պետին. «Միանալով ես էլ այն համատարած ուրախության, մի անգամ ևս մաղթում եմ Վազգեն Կաթողիկոսին բարի գալուստ, հանուն ժուստինիան Պատրիարքի, մեր ռուսներն հավատացյալների և անձամբ իմ»:

Ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը վերադառնում է պատրիարքական պալատ, ուր, հանդիսավոր իրադրության մեջ, Պատրիարքարանի մեծ դահլիճներից մեկում, տեղի է ունենում ցուցադրությունը ռուսինական եկեղեցական կյանքից երեք կինոժապավեններին:

Այցելություններ

Հունիսի 18-ին, ուրբաթ, վաղ առավոտյան, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ ժուստինիան Պատրիարքի, Անտիմ եպիսկոպոսի, Հայր Օլիմպ Բաշուլայի և իր

շքախմբի, ավտոմեքենաներով մեկնում է Դրակուսլավել, Բիդեշտ քաղաքի վրայով:

Հայրապետները կեսօրվա մոտ ժամանում են Դրակուսլավել, Կարպատյան լեռնաշղթայի այդ հիասքանչ վայրը, ուր հին մի մատուռան կողքին գտնվում է ռուսներն Պատրիարքի շքեղ վիլան:

Այստեղ հյուրասիրվելուց հետո, Վեհափառ Հայրապետը հանգստանում է իրեն հատկացված հարկաբաժնում:

Կեսօրվա ճաշից հետո, ավտոմեքենաները շարժվում են դեպի Սինայա, անցնելով Բրան, Բրաշով, Պրետյալ քաղաքները Կարպատյան լեռնանցքներով:

Մի պահ կանգ են առնում Բրաշով քաղաքի կենտրոնում գտնվող հուշակավոր և հուշակապ «Սև» եկեղեցում, գոթական արվեստի մի կոթող ռուսներն հողի վրա:

Վեհափառ Հայրապետը այստեղ մեծ հաճույքով դիտում է եկեղեցու թանկարժեք արևելյան գորգերի համբավավոր ճոխ հավաքածուն:

Երեկոյան ժամը 8-ին, ավտոմեքենաները ժամանում են Սինայայի վանքը, ուր Հայրապետներն ընդունվում են «Ton Despotin» մաղթերգի և դանգերի ղողանջի ներքո:

Հանուն վանքի միաբանություն, Հայր Նիոֆիդ Նիկան բարի գալուստ է մաղթում բարձրաստիճան հյուրերին, կարճ պատմականը անելով Սինայայի վանքի:

Ընթրիքից հետո, Վեհափառ Հայրապետը և բոլոր ընկերակիցները հանգստանում են իրենց հատկացված վանական առանձին հարկաբաժիններում:

Հունիսի 19-ին, շաբաթ, առավոտյան ժամը 8-ին, երկու Հայրապետները իրենց շքախմբերով, այցելում են Կարոլ Ա թագավորի կառուցած Պելեշ պալատը, անցյալ դարի վերջերին, որը նշանավոր է իր ճարտարապետություն, քանդակներով, նկարներով, ներքին հուշակապ կահավորումով և զարդարանքներով, արևմտյան ոճով:

Ճանապարհը շարունակելով, Վեհափառ Հայրապետը վերադառնում է մայրաքաղաք ժամը 11-ին և 12.30-ին իր շքախմբով պաշտոնական այց է տալիս Ռուսինական Ժողովրդական Հանրապետության Մինիստրներին խորհրդին առընթեր դավանությանց բաժանմունքին, ուր ջերմորեն դիմավորվում է պրոֆ. Դումիտրու Դոկաբուի կողմից, բացառիկ սիրալիրություն:

Տեղի է ունենում ջերմ զրույց և հյուրասիրություն:

Նույն օրը, ժամը 2-ին, դավանության բաժանմունքը, հանուն ռուսներն պետական իշխանության, պաշտոնական ճաշ է տալիս ի



Վեհափառ Հայրապետը շրջապատված Բուխարեստի հայոց թեմական և թաղական խորհուրդների անդամներով

պատիվ Վեհափառ Հայրապետի և շքախմբի, «Աթեննե պալատ» ճաշարանի հանդիսավոր դահլիճում, որին ներկա են լինում Տ. Ժուստինիան Պատրիարքն իր շքախմբով, ուսման պետական իշխանության ներկայացուցիչներ, գլխավորությամբ պրոֆ. Դոկարուփի և արտաքին գործոց մինիստրության ներկայացուցիչների և Ռումինիայի այլ դավանության պետերի:

Ճաշկերույթին ներկա են նաև սովետական դեսպանատան ներկայացուցիչները:

Ընդունելության ներկա են նաև ուսման մտավորականության ներկայացուցիչներ, գլխավորությամբ ակադեմիկոսներ պրոֆ. Կոնստանտինեսկու Յաշի և պրոֆ. Լուրուի:

Ընդունելության հրավիրվել էին նաև Ռումինիայի հայոց թեմական խորհրդի և եկեղեցական վարչության անդամները:

Ճաշկերույթի ընթացքում պրոֆ. Դ. Դոկարուն, հանուն ուսման կառավարության, հանդես է գալիս բարի գալստյան և ողջույնի ճանով, սրտագին մաղթանքներ ուղղելով Հայոց Հայրապետին և ջերմ հաջողություն ցանկանալով նրա առաքելության:

Իր պատասխան խոսքերով Հայոց Հայրապետը իր անհուն շնորհակալությունն է հայտնում ուսման կառավարության և դավանության բաժանմունքի այս ընդունելու-


թյան և ազնիվ զգացումների համար, արտահայտված դեպի Հայոց եկեղեցին և դեպի նրա Գահակալը:

Վեհափառ Հայրապետը այս առթիվ ևս ոգեկոչում է իր անցյալ գործունեության տարիները ուսման հողի վրա և շեշտում իր անկեղծ սերը և գնահատանքը դեպի ուսման ժողովուրդը և ուսման հայրենիքը և ի մասնավորի դեպի ուսման մշակույթն ու գիտությունը, որոնց բարիքներից ինքը լիությամբ հարստացրել էր իր հոգին, ուսման հողի վրա, իր ուսանողության տարիներին:

Վեհափառ Հայրապետը, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, իր շնորհակալությունն ու երախտագիտությունն է հայտնում ուսման բարեխնամ կառավարության և դավանությանց բաժանմունքի պետ պրոֆ. Դոկարունին, ցուցաբերված ջերմ և հարգալից վերաբերմունքի համար, և սրտագին բարեմաղթություններ անում Ռումինական ժողովրդական Հանրապետության և ուսման ժողովրդի խաղաղ առաջընթացի ու բարօրության համար:

Ճաշկերույթն անցնում է բարեկամական շափազանց ջերմ մթնոլորտում, աշխույժ և ուրախ:

Ժամը 6-ին, Ժուստինիան Պատրիարքը և Վեհափառ Հայրապետը պաշտոնական ա-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԻՅԵՆ ԱՍՏԻՊԱՐԱՆԱԿԸ

ցելուձյուն են տալիս Բուխարեստի ուսման աստվածաբանական ակադեմիային:

Նորին Ս. Օծուխյանն ընդունում են ուսուցողի շայր պոռֆ. Նիկոլայեսկուն, դասախոսական ամբողջ կազմը, քահանա հայրեր և աստվածաբանական ակադեմիայի ուսանողուձյունը, «Ton Despotin» մաղթերգով:

Բացի ակադեմիայի ուսանողներից, ներկա են նաև Բուխարեստի հոգևոր ճեմարանի ուսանողները, ընդամենը շուրջ 400 հոգի:

Հանդիսավոր մուտքից հետո, տեսչարանի դահլիճում, վերատեսուչ Հայրը Հայոց Հայրապետին է ներկայացնում դասախոսական կազմի անդամներին, որոնց թվում բազմավաստակ գիտնական և հայրաբան պոռֆ. Հայր Իոան Գումանին, ծանոթ աստվածաբաններ Հայր Լիվյու Ստանին, պոռֆ. Ն. Իոնեսկուի և ուրիշների:

Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այնուհետև առաջնորդվում է ակադեմիայի հանդիսությունց մեծ դահլիճը, ուր հավաքված հոգևորականներ, հրավիրյալներ և ակադեմիայի ու ճեմարանի ուսանողուձյունը ծափողջույններով դիմավորում են Հայոց Հայրապետին:

Հանուն ակադեմիայի, Հայր վերատեսուչը մի բովանդակալից ճառով վեր է հանում պատմական արժեքը և դերը Հայաստանյայց Եկեղեցու և նրա ձեռք բերած մեծ նվաճումները Արևելքում, քրիստոնեական կյանքի, գրականության և հոգևոր մշակույթի տեսականներից:

Ապա սրտաբուխ մաղթանքներով ողջունում է ներկայությունը Հայոց Հայրապետի և հրավիրում Նորին Ս. Օծուխյան Իր օրհնության խոսքը սանլու հաստատության և ուսանողության:

Վեհափառ Հայրապետը, շուրջ մեկ ժամ տևող իր խոսքի մեջ, նախ իր գնահատանքն է բերում և սերը դեպի այս կրթական հաստատությունը և նրա լուսամիտ մշակները, գլխավորությամբ Հայր վերատեսուչի, և ապա խոսում է Հայ Եկեղեցու ծագման, Աստվածաշնչի հայերեն թարգմանության և Վարդանանց հերոսամարտի մասին, եղբակացնելով, որ հայ ժողովուրդն ահա մոտ երկու հազար տարիներից ի վեր կա և մնում է, ամուր կանգնած Քրիստոսի Ավետարանի և քրիստոնեական մշակույթի վեմի վրա: Նորին Ս. Օծուխյանն իր խոսքը վերջացնում է օրհնությամբ և բարեմաղթություններով և ջերմ կոչով դեպի ուսանողությունը, որ հավատարիմ իրենց կոչման և հետևելով Եկեղեցու մեծ դեմքերի օրինակին, ծառայեն Աստուծուն, Եկեղեցուն և իրենց հարազատ ժողովրդին:

Վերջում գործադրվում է հոգևոր երաժշտության մի ծրագիր, կատարված ուսանողական երգչախմբի կողմից:

Ընդհանուր խանդավառության մեջ վերջ է գտնում այս շատ նշանակալից հանդիսումը:

Պատրիարքական հանդիսավոր սուրբ պատարագ և հայրապետական քարոզ ուսմիական Տոմիցա Պրլաշա եկեղեցում

Հունիսի 20-ին կիրակի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը և Սրբազան Պատրիարք Հայրը, իրենց շքախմբերով, մեկնում են մայրաքաղաքի մեծագույն և շքեղ տաճարներից դեպի Դոմնիցա Պրլաշա եկեղեցին:

Բազմահազար ուսման և հայ ժողովուրդը լցրել է եկեղեցին և շրջակայքը, խոր ջերմեռանդությամբ:

Սուրբ պատարագը մատուցում է Նորին Ամենապատվոյուն ժուստիկիան Պատրիարք Սրբազանը, իր կողքին ունենալով Բանադի միաբուրյալ Նիկոլայը և կուրծի եպիսկոպոս Թեոֆիլը:

Ս. Սեղանին սպասարկում են շորս քահանաներ և վեց սարկավազներ:

Բացի Հայոց Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամներից, սուրբ պատարագին ներկա են Ս. Սինոդի անդամներ և քույր եկեղեցիների ու դավանությունների պետեր, ինչպես նաև Պատրիարքարանի խորհրդական հոգևորականներ, ակադեմիայի վերատեսուչը, դասախոսական կազմը, հայոց թեմական և եկեղեցական խորհրդի անդամներ և այլ հրավիրյալներ:

Սուրբ պատարագի ավարտին, Տ. ժուստիկիան Պատրիարքը հանդես է գալիս Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի և Հայոց Հայրապետի մասին ողջույնի, սիրո և գնահատանքի բովանդակալից և շատ զեղեցիկ քարոզով:

Նորին Սրբույուն ժուստիկիան Պատրիարքն իր քարոզի առաջին մասում, օրվա տոնի առթիվ ոգեկոչեց հիշատակը ամենայն սրբոց, վեր հանելով Եկեղեցու այդ մեծ դավակների կյանքի և գործի լուսավոր օրինակը և կոչ արեց համայն հավատացյալ ժողովրդին՝ ընթանալ նրանց աստվածահաճո ճանապարհով, աշխարհի վրա կյանքը դարձնելու համար ավելի բարի, ավելի երջանիկ, արդար:

Այնուհետև Նորին Սրբությունը նշեց, թե առաջին դարերում բոլոր քրիստոնյաներն ապրում էին այդ սրբության զգացման մեջ, կազմելով մեկ և անբաժան մի եղբայրություն ի Քրիստոս, որ և նվիրագործվեց կոստանդնուպոլսի առաջին տիեզերական Ս. Ժո-

ղովում «Մի, Ընդհանրական և Առաքելական Ս. Եկեղեցի» բանաձևով:

Նորին Սրբութունը շարունակելով Իր բովանդակալից քարոզը, ասաց.

«Այս օրերին պատիվը և ուրախությունն ունենք ընդունելու այցելությունը Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբութուն Վազգեն Ա-ի, որ գալիս է Ս. էջմիածնից, Սովետական Հայաստանից, Իր ուղեկիցներով, որոնք ներկա են այս պահուս այս սուրբ տաճարում:

Միրելի հավատացյալնե՛ր, հայերը հին ժողովուրդ են և առաջիններից, որոնք ընդունեցին քրիստոնեական հավատը: Հոռոմեական մեծ կայսրության մեջ, Հայաստանին դրացի քրիստոնյաները տակավին հալածվում էին, երբ հայերը ճանաչեցին և ընդունեցին քրիստոնեությունը իրենց ազգից մի մեծ առաքյալի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի միջոցով, որին տոնախմբում է նաև Օրթոդոքս Եկեղեցին սեպտեմբերի 30-ին: Որով, հայերը առաջին ժողովուրդն են հանդիսանում, որի պետությունը հռչակվեց քրիստոնյա:

Հոռոմեացի հալածող կայսր Մաքսիմիանոսը այս պատճառով դարացած, հայերի դեմ պատերազմեց, որոնք պաշտպանեցին և պահեցին քրիստոնեական կրոնը: Եվ դրանից հետո էլ, դարերի ընթացքում, նրանք հերոսական կոհվներ մղեցին և մեծ զոհեր տվեցին ալլադավան և ալլազգի ուժերի դեմ, որոնք բռնի միջոցներով և արյունալի հալածանքներով կամեցան պարտադրել նրանց հրաժարվել քրիստոնեությունից: Կարելի է սասել, թե ոչ մեկ քրիստոնյա ժողովուրդ չի տառապել այնքան շատ և այնքան ծանր կերպով, ինչքան հայ ժողովուրդը:

Կյանքի այսպիսի պայմաններ խանգարեցին և տկարացրին Հայ Եկեղեցու ավանդական կապերը Օրթոդոքս Եկեղեցու հետ: Այսօր սակայն, նա ցանկանում է, որ վերականգնվեն եկեղեցական հին կապերը այնպես, ինչպես ցանկանում են նաև այլ քրիստոնյա եկեղեցիներ, որոնք նույնպես բաժանված են մնացել Օրթոդոքս Եկեղեցուց անբարենպաստ պարագաների հետևանքով: Նրանք այսօր մտածում են անցյալի եկեղեցական միության մասին և ճանապարհի վրա են գտնվում վերստին հաստատելու քրիստոնեական կյանքի առաջին հինգ դարերի հին կապերը:

Քրիստոնյա բոլոր եկեղեցիներից մեզ՝ օրթոդոքսներիս ամենամոտ գտնվողները Արևելքի Եկեղեցու հին ճյուղերից հանդիսանում են Հայ Եկեղեցին, Ասորական Եկեղեցին, Եգիպտական Ղպտի Եկեղեցին և Եթովպական Եկեղեցին, որոնք իրար մոտ գալով,

իրենց տրամադրություններն են հայտնում միասին միանալու օրթոդոքսների հետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի այցելությունը կօգնի մեր եկեղեցիների մերձեցման, ընայած Ռումեն և Հայ եկեղեցիների կապերը բավականին հին են, որովհետև 1293-ի մեծ գաղթի ընթացքին, երբ հայերը ստիպված եղան լքելու իրենց պետությունը և իրենց մայրաքաղաք Անին, անցնելով ալսօրվա Ռուսաստանի հարավային շրջաններից և Լեհաստանից, եկան Մուղղովա ԺԴ դարի առաջին կեսերին և հաստատեցին բավական բազմամարդ համայնքներ զանազան քաղաքներում, ինչպես Սուլավալում, Սիրետում, Բոնոտշանում, Յաշում, Տորոհոյում, Բագրում, Ռոմանում, Դրբու-Օգնայում, Կալացում և Ֆոքշանում:

1418-ին Մուղղովայի իշխան Ալեքսանդրու Չել-Քունի հավանությանը, Մուղղովայում հաստատվում են ևս 3 000 հայ ընտանիքներ, որոնք սիրով են ընդունվում մուղղվացիների կողմից:

Ալեքսանդր Չել-Քունի 30 հունիս 1401 թվակիր հրովարտակով, հայոց եպիսկոպոսական առաջին Աթոռը հաստատվում է Մուղղովայի մայրաքաղաք Սուլավալում, մեր երկրի հողի վրա, եպիսկոպոսական Աթոռ, որն իր գոյությունը պահպանում է մինչև 1717 թվականը: Հայերը Սուլավալում ունեցել են իրենց եկեղեցիները և վանքերը, ոմանք իրենց տրամադրված ուսման երկրի իշխանների կողմից, իսկ ոմանք կառուցված իրենց՝ հայերի կողմից, ինչպիսիք են Չամբա վանքը և Հաճկատարը: Մուղղովայի հողի վրա տեղի ունեցած հաճախակի պատերազմների հետևանքով, հայերի մի մասը անցել է դեպի Առտիալ (Տրանսիլվանիա) և հաստատվել Գեուլա, Իբաշֆալու, Բիսդրիցա, Գեորգենի և այլ քաղաքներում: Մունտենիայում և Դոբրուչայում հայերը հաստատվել են ԺՆ դարի առաջին կեսին, գաղթելով Մուղղովայից և Հայաստանի շրջաններից, Պարսկաստանի, Թուրքիայի և Բուլղարիայի վրայով: Դարերի ընթացքում հայերը ունեցել և պահպանել են իրենց գաղութները, իրենց եկեղեցիներով և քահանաներով ու դպրոցներով, որտեղ ավանդվել են իրենց մայրենի լեզուն՝ հայերենը և երկրի լեզուն՝ ուսման երկրները: Նրանք այնքան էին նույնացել մեր երկրի գերագույն շահերի հետ, որ 21 օգոստոս 1920 թվականին շնորհվել է ուսման կանխադրաքաղաքությունը բոլոր հայերին, որոնք հաստատված էին Ռումինիայում մինչև 1916 թվականի օգոստոսի 15-ը: Այդ առթիվ նշվել էր, թե «մի ժողովուրդ, հոգեկան և բարոյական այնպիսի մեծ

հատկանիշներով, ինչպիսիք են հայերը, չէր կարող չվայելել մեր երկրի կողմից ամենամեծ վստահությունն ու սերը, տրված լինելով, որ դարերի ընթացքում նրանց բոլոր զգացմունքները ամբողջապես նույնացել են ուսմիանցիների զգացմունքների հետ: Հայերը մեր երկրում միևնույն հավատարմությունը և սերը վայելում են նաև այսօր, իսկ Ռուսներն Օրթոդոքս եկեղեցու և Հայ եկեղեցու կապերը շատ սերտ են:

Հետևաբար, ինչ վերաբերում է մեր երկու եկեղեցիներին, ոչ մի արգելք գոյություն չունի, որպեսզի նրանք հասնեն առավել մերձեցման և միություն, որ ցանկալի է մեր բոլորի կողմից, ի շահ մեր եկեղեցիների և ժողովուրդների:

Այն հույսով, որ բարին Աստված ամենայն սրբոց բարեխոսությամբ կօգնի մեզ, որպեսզի իրականանա մեր իղձը, փոխադարձ սիրով և հավատարմությամբ, աշխատենք գտնել այն ճանապարհը, որով պետք է ընթանան բոլոր քրիստոնյաները, որպեսզի հասնեն իրագործմանը մեր Փրկչի աստվածային ցանկությանը և քահանայապետական աղոթքին, որը մեզ բոլորիս համար պատգամ է հանդիսանում. «Ձի ամենեքին մի իցեն, որպէս Դու, Հայր, յիս, և ես ի Քեզ, զի և ետօա ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատացէ, եթէ Դու առաքեցեա զիս» (Յովհ. Ժ 21):

Միանալով սիրո և աղոթքի մեջ, խոնարհաբար հպատակվելով Տիրոջ պատվիրանին, քրիստոնեական ուրախությամբ հուսանք իրականացնել մեր հավատի միությունը, որպեսզի բոլոր սրբերի հետ միասին, որոնց հիշատակում ենք այսօր, խոստովանենք Հորը, Որդուն և Ս. Հոգուն՝ մի և անբաժանելի Երրորդությունը:

Նորին Սրբությունն իր բարոզը վերջացնում է ջերմ մաղթանքներով և բարի ցանկություններով:

Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս հետևյալ պատասխան ճառով.

«Բարին Աստված Մեր քայլերը առաջնորդեց դեպի այս սիրելի վայրերը, եղբայրական հրավերովը Մեր սիրեցյալ Եղբոր՝ Նորին Սրբություն ժուստինիան Պատրիարքի:

Ահա մի քանի օր է, որ գտնվում ենք ռուսներ, և քաղաքներ, և գյուղեր, բոլորը ծաղկման մեջ, աղոթելով սուրբ սեղանների և հրաշագործ սրբանկարների առջ: Մենք խորապես վագված ենք ամեն ինչով, ինչ խորապես տեսանք և զգացնիք: Ռուսներ երկիրը ամբողջ վերածննդի, ծաղկման և գեղեցկացման ճանապարհի վրա է գտնվում ամեն տեսակետից: Ժողովուրդա-

կան Հանրապետության ղեկավարման այս տարիներին, ռուսներն ժողովուրդը ավելի քան երբեք կերտում է իր ճակատագիրը, ազգային վեհիրավության լիակատար պայմաններում, հայրենասիրությամբ, կազմակերպված աշխատանքով, ստեղծարար հանճարով և բոցավառ խանդավառությամբ:

Այս բոլորը Մեր հոգին լցնում են անասելի ուրախությամբ:

Սակայն Մեր սիրտը ուրախությամբ խայտում է ամապանդ դիտելով կյանքը և իրագործումները Ռուսներն Օրթոդոքս Եկեղեցու, արժանի պատմության մեջ հիշատակության:

Այսօր Ռուսներն Եկեղեցին, գուցե ավելի քան երբեք ամբողջապես գիտակից իր սուրբ առաքելության, կենսունակորեն և հաղթականորեն գործում է, գնահատված, սիրված և պաշտպանված մի ամբողջ ճշմարտապես հավատացյալ ժողովրդի կողմից:

Ռուսներն Օրթոդոքս Եկեղեցին այսօր մի փարոս է, որ լուսավորում է ռուսներ հայրենիքի սահմաններից շատ հեռու: Եթե Ռուսներն Օրթոդոքս Եկեղեցին կարողացել է հասնել այս աստվածահաճո հանգրվանին, այս ոգեկան, բարոյական հեղինակության, այս եկեղեցական շինարարության և կազմակերպության մեծ նվաճումներին, անկասկած այս բոլորը Ռուսներն Եկեղեցին պարտական է ժուստինիան Պատրիարքի բացառիկ անձնավորության և Նրա ծավալած փայլուն գործունեության:

Ժուստինիան Պատրիարքի անունը Ռուսներն Եկեղեցու պատմության մեջ ոսկե տառերով կարճանագրվի և հաջորդ սերունդները այն հիշելու են երախտագիտությամբ:

Թո՛ղ Տերը հավետ իր հովանու և իր օրհնության ներքո պահպանի Ռուսներն Օրթոդոքս Եկեղեցին, նրա ծառայողներին և հավատացյալներին, ի փառս երկրի վրա հաստատած Եկեղեցուն:

Թո՛ղ Տերը ժուստինիան Սրբական Պատրիարքին պարգևի կենաց անհատնում օրեր, քաջառողջություն, խաղաղություն և արդյունավետ գործունեություն, ի մխիթարություն ռուսներ հավատավոր ժողովրդի:

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու և նրա հավատացյալների, այս հանդիսավոր առիթով ևս Մենք բերում ենք Ս. Էջմիածնից, բազմադարյան կենտրոնը մեր քրիստոնեական հավատի, եղբայրական սիրո ջերմ ողջույնը, բարձր գնահատանքը և սրտագին բարեմաղթությունները Մեր հարապատ Պատրիարք Եղբոր, բարձրաստիճան հոգևորականության, Ռուսներն Օրթոդոքս Եկեղեցու բոլոր քրիստոսասեր սպասավորներին և աստվածային օրհնություններ ռուսներ ժողովրդին, սուրբգրական Արարատի աշխարհից:

Մեր այս այցելությունը, Մենք հավատում ենք, թե նախախնամության տնօրինությամբ կատարվեց և նա կհանդիսանա մի պատմական հանգրվան, արժանի հիշատակության մեր եկեղեցիների կյանքում, եկեղեցիներ, որոնք դարձրով միմյանց ճանաչել են որպես ջուրերի:

Անցնող դարերի ընթացքում երբեք սովոր չի իջել մեր բարեկամական և փոխադարձ հարգանքի կապերի վրա, իբրև եկեղեցիներ և ժողովուրդներ:

Հայ եկեղեցին և ժողովուրդը միշտ երախտագիտությամբ կհիշատակեն այն եղբայրական և քրիստոնեական ասպնջականությունը, որ գտան ռուսներն հողի վրա, մանավանդ անցյալ դարի վերջերին և առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ բազմաթիվ հայեր, ճողպարած Օսմանյան կայսրության մեջ իրենց դեմ շղթայակերծված մահասփյուռ սարսափներից, այստեղ գտան ապահով ապաստան, խաղաղություն, բարեկամություն և ասպնջականություն:

Մեր եկեղեցիների և ժողովուրդների միջև բարեկամությունը հաստատվել է ամուր կերպով, մեր քրիստոնեական հավատի ընդհանրության վրա, և պատմական մի փորձի վրա, միասնական կյանքի և փոխադարձ գնահատանքի վրա:

Մեր վճռական ցանկությունն է, որ այս եղբայրության կապերը և գործակցությունը մենք շարունակենք և պարզացնենք հետզհետե առավել միասնական դառնալու համար, մեր Տիրոջ և Փրկչի սիրուն և ոգիին մեջ: Միասին աղոթենք և գործենք մանավանդ, որպեսզի առավել ամրապնդվեն խաղաղության հիմքերը և բարեկամությունը աշխարհի ժողովուրդների միջև, այդ դավանելով մեծագույն պատգամը մարդաներ Աստուծո:

Սրբազան Պատրիարք Եղբայր Մեր, մի անգամ ևս Մեր սրտագին շնորհակալությունը Ձեր հրավերի և ընդունելությանց համար և բոլոր այն մաքուր սիրո վկայությունների համար, որոնք կատարվում են Ձեր կողմից:

Խնդրում ենք վստահ լինել, որ Մենք երբեք այս բոլորը չենք մոռանա, և պիտի մնանք միշտ Ձերդ Սրբության բարեկամը, եղբայրը և գնահատողը:

Թո՛ղ մեր աղոթքները միատեղ բարձրանան դեպի երկինք:

«Աստուած Կորութեանց, դարձո Կմեզ, երևեցո Կերեսս քո ի մեզ և կեցցուք» (Սաղմ. 2Թ 4):

Սուրբ պատարագի և հանդիսությանց ավարտին, ժամը 2-ին, Պատրիարքարանի պալատում, նորին Ամենապատվություն ժուստինիան Պատրիարքը, ի պատիվ իր մեծ Հյուրի, տալիս է պաշտոնական ճաշկերույթի

ներկա են Ս. Մինոզի անդամները, Բուխարեստի արքեպիսկոպոսության թեմական խորհրդի անդամները, Ռումեն ժողովրդական Հանրապետության դավանությունների կրոնապետները, արտաքին գործերի մինիստրության կողմից ամբաստանող Դիոնիսիե Խոնեսկուն, դավանությանց բաժանմունքի պետ պրոֆ Դ. Դոկաուն, ընդհանուր տնօրեն Ի. Պրապուսկուն, տնօրեններ Ի. Օնցանուն և Կ. Նենչուն:

Ճաշկերույթին ներկա են նաև սովետական դեսպանատան խորհրդականներ Վ. Ա. Սելկինը և քարտուղար Դեյատկինը:

Սեղանին ներկա են նաև աստվածաբանական ակադեմիայի վերատեսուչ Հայր Ն. Նիկոլանսկուն, դասախոսներ և արքեպիսկոպոսության խորհրդականներ, Հայր Ալեքսանդր Խոնեսկուի և Հայր Օլիմպ Քաչուլայի գլխավորությամբ:

Ընդունելության ժամանակ բաժակաճառերի շարքը բացում է ժուստինիան Սրբազան Պատրիարքը, ողջունելով Հայոց Վեհափառ Հայրապետին:

Ողջունի և հարգանքի բաժակաճառերով հանդես եկան Ռեֆորմատ Եկեղեցու պետ Հուլիոս Նակի եպիսկոպոսը, Կաթոլիկ Եկեղեցու պետ Ֆրանչիսկ Ավիլաստին եպիսկոպոսը, բարունապետ դոկտ. Մոզիս Ռոզենը, մահմեդական համայնքի պետ Յակուբ Մանմեղը և հայոց թեմական խորհրդի ատենապետ, համալսարանի դասախոս դոկտ. Գրիգոր Բավրուխյանը:

Վերջում, բուն ծափերի մեջ, խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, իր ջերմ շնորհակալությունը հայտնելով ժուստինիան Պատրիարքին և բոլոր ճառախոսներին, նրանց սրտագին արտահայտությունների համար և բարեմաղթում, որ Աստված բոլորին լինի օգնական, որպեսզի իր կամքը և իր խաղաղությունը հաստատվեն երկրի վրա, այժմ և հավիտյան, իբրև գերագույն օրհնություն և երջանկություն համայն մարդկության:

Ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ ժուստինիան Սրբազան Պատրիարք Հոր և շքախմբի անդամների, այցելություն է տալիս Անտիմ պատմական եկեղեցուն, նրա շուրջ գտնվող վանական հաստատություններին և Պատրիարքարանի մատենադարանին:

Մատենադարանի սրահներից մեկում, հատուկ սեղանի վրա, ցուցադրվել էր Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի մասին ուսմանը լեզվով տպագրված գրքերի մի հավաքածու

Հանդիպում և գրույց Ռուսներ և Հայ եկեղեցիների պատվիրակությանց միջև

Մատենադարանի այցից հետո, Անտիմ վանքի Ս. Մինոզի ժողովասրահում, տեղի է ունենում հանդիպում Ռուսներ և Հայ եկեղեցիների պատվիրակությանց միջև, զլխավորությամբ երկու Պետերի:

Հանդիպման բացումից հետո, Ս. Ժուառի-ճիան Պատրիարքը կարդում է մի ընդարձակ գիր, ներկայացնելով եկեղեցիների մերձեցման և գործակցության հետ կապված հարցեր, մեր օրերի էկոնոմիկ շարժման լույսի ներքև: Նորին Սրբությունը հիշում է պատմական սովալներ անցյալից, շեշտելով անհրաժեշտությունը միության գաղափարի, ակնարկելով Ասրհուսի, ինչպես նաև Աղղիս-Աբեբայի ոչ քաղկեդոնական եկեղեցիների ժողովին:

Նորին Սրբության խոսքը բովանդակալից էր և ջերմ, ոգեշնչված քրիստոնեական սիրով և հատկապես գնահատանքով և հարգանքով դեպի Հայաստանյայց եկեղեցին և նրա կատարելիք դերը քրիստոնեական եկեղեցիների կյանքում:

Ապա խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, որ նախ իր մասնավոր գոհունակությունն է հայտնում, որ Ժուառիճիան Պատրիարքի նախաձեռնությամբ և զլխավորությամբ կազմակերպված է այս պատմական հանդիպումը, որն անկասկած իր նշանակությունը կունենա երկու եկեղեցիների հարաբերությունների և գործունեության հետագա զարգացման ճանապարհին:

Նորին Ս. Օծությունն իր հերթին հանգամանորեն ներկայացնում է Հայ եկեղեցու ավանդական կեցվածքը և սիրո ու համագործակցության ոգին քույր եկեղեցիների հանդեպ, ինչպես նաև մեր եկեղեցու արդի վիճակը Հայաստանում և Սփյուռքում, ուր ապրում է ավելի քան կեսը հայ ժողովրդի, կազմակերպված իր Աղգային եկեղեցու հովանու ներքո:

Այս առթիվ, Վեհափառ Հայրապետը հայտնում է, թե Ասրհուսի հանդիպման 1964 թվականին Հայ եկեղեցին չի մասնակցել, իսկ Աղղիս-Աբեբայի ժողովին, 1965 թվականին, թեև անձամբ ներկա է գտնվել ինքը ի զուգու հայ եկեղեցու պատվիրակության, սակայն պաշտոնապես ժողովի աշխատանքներին չի մասնակցել և ժողովի որոշումների տակ չի ստորագրել, Հայ եկեղեցու ներքին որոշ կացությունց հետ կապված պարագաների հետևանքով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը անդրադառնում է եկեղեցիների միության հարցերին, ընդգծելով Հայ եկեղեցու տեսակետ-

ները, 4 հունիս 1965 թվակիր հայրապետական իր կոնդակի ոգով, հայտնելով, թե Հայաստանյայց եկեղեցին պատմական այս շրջանին ցանկանում է իրականացած տեսնել լիության միության եկեղեցիների և քրիստոնյա ժողովուրդների միությունը քրիստոսի սիրուն մեջ և նրանց գործակցությունը քրիստոնեական եկեղեցիները և համայն մարդկությանը հուզող հարցերի առնչությամբ, ամեն մի եկեղեցի պահպանելով իր ավանդությունները և վարչական-կազմակերպական անկախ ինքնուրույնությունը, ղեկավարությունը:

Վեհափառ Հայրապետն իր խոսքը վերջացնում է լավատես հայացքներով եկեղեցիների միության վերաբերյալ:

Այս առթիվ խոսք են առնում նաև Մուղղվայի Ս. Ժուառին միաբուրյալը, որ շեշտում է եկեղեցիների միության գաղափարի այժմեությունը, իբրև անհրաժեշտություն մեր օրերի կյանքի պայմանների, բնորոշում է Վազգեն Վեհափառ Հայրապետի հայացքները «միություն այլազանության մեջ» բանաձևով, առաջադրելով, որ միության գաղափարը ժամանակի ընթացքում կարող է իրականություն դառնալ հետզհետե առավել լիության մեջ:

Միաբուրյալի ժուառինը ողջունում է Հայ եկեղեցու դիրքը, բաժանում է նրա մտահոգությունները և վերջացնում է իր խոսքը լավատես ոգով քրիստոնեական եկեղեցիների եղբայրության և միության նկատմամբ:

Վերջում խոսք է առնում Ժուառիճիան Պատրիարքը, գոհունակություն հայտնելով այս հանդիպման համար, եզրակացնելով, որ եկեղեցիների միջև ցանկալի է տեսնել հետզհետե առավել աշխատակցություն, փոխադարձ ճանաչում և կապերի ամրապնդում, ինչ որ ամբողջապես համապատասխանում է մեր և Հայ եկեղեցու իղձերին և շահերին:

Սրբազան Պատրիարքը վերջացնում է իր խոսքն ասելով.

«Արդ, սկսենք առաջ ընթանալ, որպեսզի հեռու հասնենք»:

Վեհափառ Հայրապետը պատասխանում է. «Իսկ Մենք կողջագուրենք Ձեզ սիրով»:

Նույն երեկոյան, ընթրիքից հետո, ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով գնացրով մեկնում է դեպի Յաշ, ուղեկցության մեջ Մուղղվայի Ժուառին միաբուրյալի, Անտիմ եպիսկոպոսի և Հայր Օլիմպ Բաշույանի:

Մույն ուղևորության մասնակցում է նաև դոկտ. Գրիգոր Բամբուխյանը:

Վեհափառ Հայրապետը Մուղղվայում

Հունիսի 21-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը, իր

շքախմբով և բարձրաստիճան ուղեկիցներով, ժամանում է Մոլդովայի մայրաքաղաքը Յաշ և առաջնորդվում միտրոպոլիտարանի մեծակառույց պալատը:

Նորին Ս. Օծուխյան տրամադրվում է շքեղ պալատի առանձին հարկաբաժիններից մեկը:

Կարճ հանգստից և նախաճաշից հետո, ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով, հանդիսավոր մուտք է գործում միտրոպոլիտարանի տաճարը, զանգերի ղողանջի և «Ton Despotin»-ի վեհ հնչյունների տակ, տաճարի հոգևորականության կողմից ընդունվում է խաչով ու խաչվառով, գլխավորությամբ Իրինեա վարդապետի:

Տաճարում ներկա է նաև հավատացյալների բազմություն:

Կրոնական արարողությունից հետո, Նորին Սրբազնություն ժուստին միտրոպոլիտը ջերմ ողջույնի և բարի գալստյան խոսք է ուղղում Հայոց Հայրապետին, հանուն Մոլդովայի միտրոպոլիտության և հավատացյալ ժողովրդի:

Նորին Սրբազնությունը մասնավոր զնահատանքով է խոսում Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի մասին և ոգեկոշում հայոց ներկայությունը դարերից ի վեր Մոլդովայի հողի վրա և վեր է հանում դարավոր բարեկամությունը ուսմանների և հայերի միջև:

Նորին Սրբազնությունը շեշտում է. «Շաշերը և ուսմանները մեր երկրում ապրել են միշտ խաղաղության և փոխադարձ հասկացողության մեջ: Այստեղ հայերը երբեք չեն համարվել օտարականներ և երբեք դժգոհելու պատճառներ չեն ունեցել:

Այսօր եղբայրական կապերը հայերի և Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու միջև ավելի են զարգանում և ամրապնդվում:

Մեր հայրենիքում ապրող հայ հավատացյալները, ուսմանների կողքին, հավասար եռանդով մասնակցում են այն բոլոր ձեռնարկներին և աշխատանքներին, որոնք կատարվում են մեր հայրենիքի ազատ առաջընթացի համար:

Մենք միասին ենք նաև միջազգային գետնի վրա մեր աշխատանքներում, վասն խաղաղության ժողովուրդների ամբողջ աշխարհում»:

Նորին Սրբազնությունը շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին, որ ցանկություն է հայտնած այցելել Մոլդովա:

Նորին Սրբազնություն ժուստին միտրոպոլիտը վերջացնում է իր խոսքը բացականչելով.

«Թո՛ղ Աստված օրհնի Հայաստանը: Թո՛ղ Աստված օգնական լինի Ձեզ»:

Պատասխանելով ժուստին միտրոպոլիտի ջերմ խոսքերին, Վեհափառ Հայրապետն իր խոր գոհունակությունն է հայտնում, որ Մոլդովա այցելելու իր իղձը իրականանում է և ինքը պատեհություն կունենա տեսնելու բազմաթիվ սրբավայրեր, որոնք հանդիսանում են հավատի սյունները ուսման հավատացյալ ժողովրդի, և որոնք միաժամանակ ուսման ստեղծարար հանճարի արգասիքներն են, որպես ճարտարապետական կառուցում և գեղարվեստական նկարչություն:

Նորին Ս. Օծուխյանն իր ուրախությունն է հայտնում, որ վերստին ինքը աղոթելու է նույնքան պատմական հայ եկեղեցիների սեղանների առաջ, որոնք հայերի կողմից կառուցվել են հավատով և սուրբ եռանդով, դարեր առաջ, մոլդովական այս հյուրընկալ և բարի հողի վրա:

Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունն է հայտնում Տ. ժուստին միտրոպոլիտին՝ նրա այնքան ջերմ ընդունելության և հյուրասիրության համար, և իր օրհնությունն է տալիս Մոլդովայի եկեղեցիներին և ներկա հավատացյալներին:

Կրոնական արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետն այցելում է միտրոպոլիտարանի թանգարանը, հոգևորականների հանրակացարանի մեծ շենքը և վարչական պալատը:


Փոքր հանգստից հետո, Վեհափառ Հայրապետը, նույն շքախմբով և ուղեկցությամբ ժուստին միտրոպոլիտի, այցելում է հռչակավոր Տրեյ Երարիս պատմական եկեղեցին, թանգարան գոթական սրահը, ապա նույնքան պատմական Կոլյա եկեղեցին, Յաշի ազգային թատրոնը և Կորուփ պատմական այգին, որտեղ սրբությունը պահպանվում է Միխայիլ էմինեսկու ուսման մեծ բանաստեղծի թմբին:

Վեհափառ Հայրապետն այնուհետև այցելում է Յաշի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին, ուր դիմավորվում է Յաշի փոքր համայնքի կողմից Տ. Վահան քահանա Կարապետյանի գլխավորությամբ: Տեղի է ունենում կարճ արարողություն, որից հետո Վեհափառ Հայրապետը օրհնում է ներկաներին:

Կեսօրին, ժուստին միտրոպոլիտը ընդունելություն է կազմակերպում ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Բացի բարձրաստիճան ուսման հոգևորականներից, սեղանին ներկա են Յաշի շրջանային կոմիտեի նախագահ Խոնստանտին Նիստորը, Յաշի քաղաքի իրապետ Կ. Ֆիլիպը, ակադեմիկոս պրոֆ. Ղալա. Վ. Ուրշիկուն, պրոֆ. Ղրկտ. Հուլիու Նիցեսկուն, պրոֆ. Յան Պոպան, բանաս-



ՅԱՇԻ ՏՐԻԵՐԱՐԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋ



Ռոմանի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին

տեղծ Կ. Ասենեն, դավանությանց բաժանմունքի ներկայացուցիչներ, ինսպեկտոր Ֆլորին Պոպոզկան և Դ. Անդրոնեն:

Ներկա են նաև ռումեն թեմական խորհրդի ներկայացուցիչներ և երեք ներկայացուցիչներ Յաշի հայ համայնքից:

Հնդունելության ժամանակ փոխանակվում են բաժակաճառեր:

Երեկոյան ընթրիքը տեղի է ունենում ժուռտին միտրոպոլիտի Բուշում այգում, քաղաքից քիչ հեռու, գեղածիծաղ բնության ծոցում:

Այցելություն Մոլդովայի պատմական վանքերին

Հունիսի 22-ին, Լեբեշաբքի, երեկոյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով և ուղեկցությամբ Տ. Ժուռտին միտրոպոլիտի, Տ. Անտիմ եպիսկոպոսի, Տ. Իրինեու վարդապետի և Հայր Օլիմպ Քաշուլայի, ավտոմեքենաներով գնում է Ագապիա (Կուսանաց) վանքը, որը հայտնի է իր ներքին նկարազարդումներով, կատարված անցյալ դարում, ռումեն մեծագույն նկարիչ Նիկոլան Կրիկորեսկուփ կողմից:

Վանքի մուտքին, ռումեն կույսերի մի մեծ խումբ, գլխավոր մայրապետի առաջնորդությամբ, բուրվառներով և հոգևոր երգերով, դիմավորում է Հայոց Հայրապետին և առաջնորդում Ս. Տաճար:

Ներկա է նաև հավատացյալների մի հոծ բազմություն:

Տ. Ժուռտին միտրոպոլիտը բարի գալըստյան խոսք է արտասանում, որին պատասխանում է Վեհափառ Հայրապետը, օրհնելով վանքի միաբաններին և ժողովրդին, խաչիկներ բաժանելով կույսերին:

Եկեղեցական արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը հրավիրվում է կույսերի կողմից մեծ խնամքով և ճաշակով պատրաստված վանական ճաշի:

Փոքր հանգստից հետո, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Ագապիա վանքից և ուղղվում Վարադեկ կուսանոցը, ուր նույն կարգով և նույն հանդիսությամբ ընդունվում է կույսերի և ներկա հավատացյալների կողմից:

Այստեղ ևս, Տաճարում, ողջույնի խոսքեր են փոխանակվում ժուռտին միտրոպոլիտի և Վեհափառ Հայրապետի միջև, ի ներկայության շուրջ 150 միաբան կույսերի և մի խումբ հավատացյալների:

Վեհափառ Հայրապետը այնուհետև այցելում է վանքի եկեղեցական թանգարանը:

Տեղի է ունենում հյուրասիրություն վանքի մեծավորուհու կողմից, մրգերով և ընտիր խմորեղեններով:

Հրաժեշտ առնելուց հետո վանքից, ավտոմեքենաներն ուղղվում են դեպի Նյամց նշանավոր ռումինական մեծ վանքը, որն այսօր ունի շուրջ 120 միաբան:

Հեռվից հնչում են այս պատմական վանքի նշանավոր և հնչեղ զանգերը, տոնական հանդիսավորությամբ:

Վանքի ամբողջ միաբանությունը, զգեստավորված, սպասում է Հայոց Հայրապետին խաչով, խաչվառով, շրջապատված վանքի հոգևոր ճեմարանի ուսանողությամբ և շրջակա շեներից եկած հավատացյալներով, գլխավորությամբ Նյամց վանքի վանահայր Տ. Գիոնիսիսի Վելեա վարդապետի:

Վանական երգչախմբի կատարած հոգևոր երգերի հնչյունների տակ, Վեհափառ Հայրապետը մուտք է գործում եկեղեցի, համբուրում Ս. Սեղանը: Բարի գալըստյան հուզիչ ճառ է արտասանում ժուռտին միտրոպոլիտը, խոր հուզումով ոգեկոչում պատմական անցյալը Նյամց վանքի և վեր է հանում նրա կատարած դերը Ռումեն Եկեղեցու պատմության մեջ, ինչպես նաև ռումեն մշակույթի ու եկե-

ղեցական արժեքների պահպանության գործում:

«Այս պատմական հուշարձան վանքը, — ասում է ժուռտին միտրոպոլիտը, — այսօր հիմնապես վերանորոգվել է մեր պետության նյութական միջոցներով և վերստին է ստացել իր նախնական հոյակապ տեսքը, որ նա ուներ Մեծն Եսեֆան իշխանի փառքի օրերին: Ահա այս վանքը և այս սրբատեղին գրկաբաց կրնդունեն Ձեր Սրբությանը և բոլորս կողջենք. «Բարի՛ եկաք մեր այս աղոթքի տունը, որը խնդրում ենք համարել նաև Ձեր տունը»:

Վեհափառ Հայրապետը պատասխանում է հատկապես հուզված, հայտնելով իր եղբայրական երախտագիտությունը ժուռտինի և Պատրիարքի հրավերին և ժուռտին միտրոպոլիտի կողմից կազմակերպված այս փառավոր ընդունելությանը համար.

«Այժմ բացառիկ ուրախությունն ունենք գտնվելու այս վանքում, որն իրոք ռուսներ կրկի սրբավայրերի մեջ առաջնակարգ տեղ է գրավում իր պատմական անցյալով և իր իրագործումներով: Մեզ համար, աշխարհի բոլոր քրիստոնյաների համար, մեծ միսիոնարություն է հաստատել, թե՛ ձեր երկրում վանքերը և եկեղեցիները այսքան լավ պահված ու խնամված, հանդիսանում են հոգևոր կյանքի կենտրոններ, որոնց պեղաններից բաշխվում են բոլորին օրհնություններ և աստվածային շնորհներ:

Անտարակույս այս վանքը բացառիկ տեղ է գրավում Ձեր երկրում և հանդիսանում է միաժամանակ քրիստոնեական կյանքի սյուներից մին ամբողջ աշխարհում:

Ուղիղ տասը տարիներ են անցել այն օրերից, երբ Մենք մեկնեցինք այս բարի երկրից և կոչվեցինք գրավելու Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը Էջմիածին:

Ուղիղ տասը տարիներ լրանում են նաև այն օրերից, երբ Մենք այցելեցինք այս վանքը 1955 թվականի օգոստոսի վերջերին, Էջմիածին Մեր մեկնումից հափվ մի-երկու շաբաթ առաջ:

Պատկերացրեք Մեր հուզումը և Մեր հոգու ուրախությունը: Թույլ տվեք, սիրելի՛ միաբան եղբայրներ, սիրելի՛ ուսանողներ և կավատացյալներ, այս հանդիսավոր պահին, Ձեզ բոլորիդ բերելու քրիստոնեական ողջույններ և աստվածային օրհնություններ Ս. Էջմիածինից և սուրբ-գրական Արարատի փեշերից՝ Հայաստան աշխարհից:

Ս. Էջմիածինը ինքն էլ քրիստոնեական պատմական սրբատեղիներից մեկն է հանդիսանում, հիմնված Դ դարի սկզբներին, որը ճակատագրական դեր է խաղացել Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ, մինչև մեր օրերը»:

Ապա Վեհափառ Հայրապետը իր խոսքը մասնավոր կերպով ուղղում է հոգևոր ճեմարանի ավելի քան 100 ուսանողներին, հորդորելով նրանց զորանալ հոգևոր զրահներով, մոտ ապագային նվիրումով և հավատով ծառայելու համար Եկեղեցուն և ուսման ժողովրդին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն օրհնում է բոլորին առատ բարեմաղթություններով:

Չափազանց խանդավառ և զվարթ մթնոլորտում, ուսանողների երգչախմբի հոգևոր երգերով, Վեհափառ Հայրապետը իր հետևորդներով առաջնորդվում է վանքի հանդիսությանց դահլիճը, որտեղ տեղի է ունենում ճոխ ճաշկերույթ:

Վեհափառ Հայրապետին և բոլոր ուղեկիցներին հատուկ հարկաբաժիններ են հատկացվում վանական բարեկարգ և շքեղ կահավորված շենքերում, ուր նրանք գիշերում են:

Հունիսի 23-ին, չորեքշաբթի, առավոտյան նախաճաշից հետո, Վեհափառ Հայրապետն այցելում է Նյամց վանքի հարուստ թանգարանը և ծանոթանում է վանքի վրա կատարված շինարարական աշխատանքներին և նկարչական վերանորոգումներին և իր հիացմունքն է հայտնում ճաշակով կատարված այդ աշխատանքների համար, որոնց շնորհիվ երևան են հանվել վանքի ճարտարապետական, նկարչական արվեստի գեղեցկությունները, իրենց նախնական և հարազատ ձևերի մեջ:

Վեհափառ Հայրապետը շնորհավորում է վարպետ նկարչին և մանրամասնորեն հետաքրքրվում ու ծանոթանում նրա որմանկարչական արվեստին և տեխնիկային:


Բացառիկ և խոր տպավորություններով, Վեհափառ Հայրապետը բաժանվում է Նյամց վանքից:

Ավտոմեքենաներն ուղղվում են դեպի Բիբազի նորակառույց ամբարտակը, Կարպատյան լեռնաշղթայի խոր կիրճերից մեկում կառուցված, հսկա իրագործումներից մեկը Ռուսիանական ժողովրդական Հանրապետության, որը մեծ հիացում է պատճառում այցելուներին:

Բիբազից ավտոմեքենաներն ուղղվում են դեպի Ռոման քաղաքը, անցնելով Պիադրանյամց և Բաբաու քաղաքներից:

Վեհափառ Հայրապետը կանգ է առնում մի ժամով Բաբաու, այցելելու հայոց եկեղեցին: Այստեղ այսօր ապրում են միայն մի քանի հայ ընտանիքներ:

Ամրակուռ և հոյատեսիլ հայոց եկեղեցին վկայում է սակայն հայ համայնքի բարգա-



Էմալպատ Ավետարանի կալմ (Նպեր Ամենապատիվ Ս. Ժուստինիան Պատրիարքից)

վաճ անցյալի և եկեղեցական կազմակերպված կյանքի մասին:

Ժամբ 2-ին, Վեհափառ Հայրապետը ժամանում է Ռոման առաջնորդանիստ քաղաքը: Մայր եկեղեցու զանգերի զողանջների ներքո, Վեհափառ Հայրապետը հանդիսավոր թափորով, երգով և շարականով առաջնորդվում է Մայր Տաճար, ուր նորին Ս. Օծուխյան ող-

ջունում է Ռոմանի Ս. Բարդենին եպիսկոպոսը, շրջապատված բազմաթիվ քահանա հայրերով: Ներկա են բազմաթիվ հավատացյալներ, որոնց մեջ նաև մի քանի հայեր անդի փոքրաթիվ հայ համայնքից:

Բարի գալստյան ջերմ խոսքերով, նորին Սրբազնություն Բարդենին եպիսկոպոսը ողջունում է Վեհափառ Հայրապետին և խոսում

Ռումեն և Հայ եկեղեցիների և հավատացյալների անբաղկատի բարեկամության մասին, հատկապես Մոլդովայում, և ջերմագին բարեմաղթություններ է անում Հայ Եկեղեցու և Հայաստանի հավատացյալների համար:

Վեհափառ Հայրապետը պատասխանում է քաղցր զգացմունքներով համակված դեպի գերաշնորհ Տ. Բարդենիե եպիսկոպոսը, որի բարեկամն է եղել տարիներ առաջ: Նորին Ս. Օծուխյունը բարեմաղթություններով և օրհնությամբ է վերջացնում իր խոսքը:

Կեսօրին, տեղի է ունենում պաշտոնական ճաշկերույթ եպիսկոպոսական պալատում, որին ներկա է նաև տեղի իշխանությանց ներկայացուցիչ պր. Տ. Սավին:

Ճաշի ժամանակ փոխանակվում են ճառեր: Ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը և Ժուստին սրբազան միտրոպոլիտը, ուղեկցությամբ Բարդենիե եպիսկոպոսի և նրա շքախմբի, այցելում են հայոց եկեղեցին, որը հիմնված է ԺՁ դարում և վերակառուցված անցյալ դարի կեսերին, Բավարիայից հրավիրված Իոհան Բրանդել ճարտարապետի կողմից:

Ռումանի հայոց եկեղեցին, իր ճարտարապետական կառուցվածքով, արտաքին և ներքին ձևավորմամբ, Մոլդովայի պատմական գեղեցիկ հուշարձաններից մեկն է համարվում:

Այստեղ ևս, մինչև մեր դարի սկիզբները, բարգավաճ և հոծ հայ համայնք է ապրել ու գործել իր հոգևոր կյանքով, ազգային վարժարանով:

Ռումանի մի քանի տեսարժան վայրերը այցելելուց հետո, ավտոմեքենաներն ուղղվում են դեպի Մուչավա քաղաքը, ուր ժամանում են երեկոյան ժամը 9-ին:

Վեհափառ Հայրապետը, Ժուստին Սրբազան միտրոպոլիտն ու բոլոր ուղեկիցները առաջնորդվում են Ս. Յուան Զել Նոու վանքի միտրոպոլտարանի պալատը, ուր հյուրերին հատկացվում են առանձին հարկաբաժիններ:

Վանքի վանահայր Հ. Նեստոր վարդապետը բարի գալստյան խոսքերով ողջունում է հյուրերին:

Վեհափառ Հայրապետը պատմական Մուչավայում

Հունիսի 24-ին, հինգշաբթի, տոնական ուխտի օրն է Ս. Յուան Զել Նոուի: Բազմահազար ուսմիհանցի հավատացյալներ, իրենց ազգային երփներանգ տարազներով, շրջակա հեռավոր և մոտիկ քաղաքներից ու գյուղերից, նախորդ գիշերվանից եկել և լցրել են վանքի ընդարձակ շրջափակը:



Ռումինական փայտաշեն եկեղեցի

Վանքի բակի կենտրոնում, մի հատուկ տաղավարի ներքո, դրվել են Ս. Յուանի աճյունները, օրվա պաշտամունքի առարկան: Հավատացյալները շարան-շարան, երկյուղածորեն, մոտենում են և համբուրում սուրբի մասունքները, աղոթքի ջերմ մրմունջներով:

Վանքի արևմտյան կողմում հատուկ պատարագի սեղան է պատրաստված, բացօդյա, օրվա պատարագը մատուցելու համար:

Ժամը 10-ին, Ժուստին սրբազան միտրոպոլիտը, շքեղորեն զգեստավորված, իր կողքին ունենալով Անտիմ և Բարդենիե եպիսկոպոսներին, քահանաների և սարկավազների մի մեծ խումբ, առաջնորդվում է դեպի սեղան, հանդիսավոր թափորով, մատուցելու օրվա սուրբ պատարագը:

Նույն թափորի մեջ, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով, առաջնորդվում է բացօդյա սեղանի բնժը, մասնավոր հատկացված տեղում:

Թափորը առաջանում է հանդիսավոր և դանդաղ, ժողովրդական զանգվածի միջև, բարեպաշտիկ, հուզիչ մթնոլորտում:

Հայոց Հայրապետը և ժուտտին սրբազան միտրոպոլիտը, կողք-կողքի, առաջնում և օրհնում են հավատացյալներին:

Սուրբ պատարագը կատարվում է հանդիսավորությամբ և հոգեզմայլ երգեցողության, ծովածավալ հավատացյալ բազմության խոր լուսթյան և հոգևոր ջերմ ապրումների մեջ:

Սուրբ պատարագի վերջում, ոգեշունչ քարոզ է խոսում պատարագիչ ժուտտին միտրոպոլիտը, Ս. Յուանի տոնի առթիվ հոգևոր մխիթարություն և օրհնություն բաշխելով հավատացյալներին:

Քարոզի երկրորդ մասում, ժուտտին սրբազան միտրոպոլիտը խանդավառ խոսքերով ողջունում է ներկայությունը Հայոց Վեհափառ Հայրապետի, խոսում նրա անձնավորության, նրա կյանքի և գործունեության մասին և շեշտում Հայոց Հայրապետի Ռումինիա, Մոլդովա կատարած այցելության պատմական նշանակությունը, ռումին և հայ ժողովուրդների դարավոր կապերի ամրապնդման գործում:

Խոր հուզումով խոսք է ասում Վեհափառ Հայրապետը և փառք տալիս Աստուծուն, որ այնքան մեծ ուրախություններ են պարգևվում Իրեն, Ռումինիա այցելության առթիվ:

«Այս սուրբ օրվա հիշատակը անջնջելի կմնա Մեր հիշողության մեջ: Երեկ երեկոյան և այս առավոտ, ի տես այս բավաճապար հավատավոր ժողովրդի ջերմեանդության և հոգևոր մաքուր ապրումների, Մեր հոգին վկայում է, որ գտնվում ենք սքանչելի մի պատկերի առաջ, որը այլ կերպ չենք կարող բնորոշել, քան որպես հրաշքը հավատի:

Մենք գալիս ենք հեռավոր Հայաստանից, քրիստոնյա մի հին երկրից, որն իր հոգին նույնպես բաց է արել Զրիստոսի լուսի առաջ դեռևս Դ դարից սկսյալ: Մենք այդ երկրից ենք գալիս, և Ս. Էջմիածնից բերում ենք ձեզ քրիստոնեական ջերմ ողջույն և աստվածային օրհնություններ, ձեզ, հավատացյալ ռումինացիներ, և Մեր սրտի բովանդակ ջերմությամբ, աղոթում ենք առ Աստված, որպեսզի Տերը անսասան պահի Ռումեն Օրթոդոքս Եկեղեցին և համայն ռումեն ժողովրդին:

Այսօրվա պատկերը Մեր հոգու մեջ պահած, նույն այս ջերմ աղոթքը դեպի երկինք պիտի առաքելք նաև Ս. Էջմիածնի սեղաններից:

Բարին Աստված ձեզ բոլորիդ լինի միշտ պորավիզ և պահապան, այժմ և հավիտյան: Ամեն»:

Եկեղեցական թափորը նույն հանդիսավորությամբ առաջնորդվում է դեպի միտրոպոլիտարանի պալատը, ուր տեղի է ունենում պաշտոնական ճաշկերույթ:

Վեհափառ Հայրապետը, հետմիջօրեին, իր շքախմբով և ուղեկցությամբ ռումեն բարձրաստիճան հոգևորականության, այցելում է Սուչավայի հայոց Ս. Խաչ եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով:

Հայոց Հայրապետին դիմավորում են ծերունազարդ արժանապատիվ Ս. Գեել ավագ քահանա Մանդայանը, հոգեշնորհ Ս. Զարեհ արեղա Պարոնյանը, եկեղեցական խորհրդի անդամներ և մի խումբ հայ հավատացյալներ եկած Բուխարեստից, որոնց թվում նաև ծանոթ մտավորական և բանասեր Լ. Ճ. Սիրունին, պետօպերայի մեներգչուհի Արաքսի Սվանյանը և մի քանի հայ ընտանիքներ Բոտոշան և Ռոման քաղաքներից:

Արժանապատիվ Ս. Գեել քահանան, դողդողուն ձայնով և մեծ հուզումով, արտասովախառն, կարդում է հետևյալ ուղերձը.

«Վեհափառ Տեր.

Հանուն հին համայնքի մը, որմն դժբախտաբար բեկորներ միայն կմնան այսօր, և հանուն նաև նվիրական այս վայրերուն, որոնք այնքան սերունդներու երկյուղածության վկաները հանդիսացան, թույլ տվեք, որ Ձերդ Վեհափառության գալուստը ողջունեմ պատմական այս ոստանին մեջ:

Այս քաղաքը անծանոթ չէ Ձերդ Ս. Օծության: Անոր վանքերեն մեկուն՝ Հաճկատարի մեջ էր, որ շաղկապվեցաք Հայ Եկեղեցիին հետ և ուր Ձեր անդրանիկ պատարագը մատուցիք:

Ս. Հաճկատարը, որ հուզմունքով և հպարտությամբ հետևեցա՞վ Ձեր նախախնամական վերելքին Հայ Եկեղեցվո նվիրապետության աստիճաններեն վեր, ինքն ալ կհրճվի հիմա, Հայոց Հայրապետը ողջունած ատեն իր կամարներուն տակ: Փոքր երջանկություն չէ նաև ինձ համար, այս սրբավայրերու ծերունկ պահակիս, աչքերս փակելե՞ն առաջ, տեսնել անգամ մը ևս զՁեզ, հիմա արդեն իբրև Հայ Եկեղեցվո Գերագույն Պետ, նվիրական այս վայրերուն սեմեն ներս, ստանալ Ձեր օրհնությունը, ինչպես նաև ողջույնը, զոր Ս. Էջմիածնեն և Հայոց հողին կրեքք մեզի:

Երջանիկ եմ այս օրվան համար, զոր Տերը պարգևեց ինձի, և ուր կրնամ ըսել այլևս. «Արդ, արձակեա զձառայս»:

Մաղթանքի արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը խոսք անելով ողջունում է Տեր Հորը, գնահատանքի խոսքերով դրվատում նրա անբասիր ծառայությունը և օրհնում ներկաներին:

Ապա Վեհափառ Հայրապետն այցելում է հայոց Դուռնու-Ռոշու եկեղեցին, Բրունքով ընտանիքի կառուցած գեղեցիկ մատուռը, հայոց գերեզմանատունը, Ս. Օգսենտիոս

Զամբա հայկական հնադարյան վանքը, ուր հայ հոգևորականների խումբը երգում է հաղթական շեշտերով «Ուրախ լեր Ս. Եկեղեցի» և «էջ Միածինն ի Հօրէջ» շարականները:

Ն. Ճ. Սիրունին պատմական բացատրություններ է տալիս Զամբայի Ս. Օգոսենտիոս վանքի մասին:

Զամբայի վանքը ուսման կառավարության մասնավոր խնամքի առարկան է և պետության ծախսով վերանորոգվել է մասամբ 5—6 տարի առաջ, որպես Ռումինիայի պատմական արժեքավոր հուշարձաններից մեկը: Ծրագրվել են վերանորոգչական նոր աշխատանքներ, նույնպես պետական օժանդակությամբ:

Վերադարձի ճանապարհի վրա տեղի է ունենում հյուրասիրություն Տ. Գնել ավագ քահանայի երիցատանը:

Հունիսի 25-ին, ուրբաթ, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, որոշվում է ուխտագնացություն կատարել դեպի հայոց հինավուրց Հաճկատար Ս. Աստվածածին վանքը, սուրբ պատարագի մատուցմամբ:

Ս. Հաճկատար վանքը գտնվում է Սուլավայից 4 կիլոմետր հեռավորության վրա, կառուցված 1512 թվականին, մի փոքր բլուրի կատարին:

Հայ և ուսման հավատացյալներ, առավոտ կանուխ, արդեն ճանապարհ են ընկել դեպի Հաճկատար, շատեր հետիոտն, ինչպես ուխտի մեծ օրերին:

Ժամը 9-ին, եկեղեցին և ընդարձակ շրջափակը լցվել էին հավատացյալներով:

Պատարագում է Տ. Գեորգ վարդապետ Սերայաբյանը:

Ս. Սեղանին սպասարկում է Տ. Զարեհ արեղա Պարոնյանը:

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում են Բուխարեստից ուխտավորաբար եկած մի խումբ հավատացյալներ, երգչուհի Արաֆա Սվանյանի մենակատարությամբ:

Սուրբ պատարագը մատուցվում է գեղեցիկ կատարումով, հուզիչ մթնոլորտում:

Վեհափառ Հայրապետը քարոզում է հուզված շեշտով, նախ ուսմանը և ապա հայերեն լեզվով, ոգեկոշիչով հեռավոր անցյալը և Հաճկատար սրբավայրի հիմնադրության սքանչելի պարագաները, Հայ Եկեղեցու զավակների աստվածասեր կյանքը այդ վայրերում, ինչպես նաև իր անձնական հիշատակները, որոնք կապված են Սուլավայի և Հաճկատարի հետ:

Վեհափառ Հայրապետն իր շնորհակալության խոսքն է ուղղում գերաշնորհ Տ. Ժուստին միտրոպոլիտին, գնահատանքի խոսքեր է ասում Տ. Տիրայր եպիսկոպոսի և ծերու-

նազարդ Տ. Գնել քահանայի հասցեին և իր օրհնությունը բաշխում բոլորին:

Սուրբ պատարագից հետո, վանական շենքում տեղի է ունենում ճաշկերույթ:

Բովանդակալից և գեղեցիկ բաժակաճառեր են արտասանում Անտիմ եպիսկոպոսը, Բարտեմիե եպիսկոպոսը, Տիրայր եպիսկոպոսը, դոկտ. Գրիգոր Բամբուխյանը, Ն. Ճ. Սիրունին և եկեղեցական համայնքի ատենապետ պր. Կախան:

Վերջում օրհնության խոսքով սեղանը փակում է Վեհափառ Հայրապետը, ընդհանուր ոգեշնչման և ուրախ տրամադրությունների մեջ:

Վեհափառ Հայրապետն իր շքախմբով վերադառնում է Սուլավայի միտրոպոլտարան և կարճ հանգստից հետո, մեկնում է Դրագոմիրոնա հայտնի կուսանաց վանքը, Սուլավայից ոչ շատ հեռու: Վեհափառ Հայրապետին դիմավորում են վանքի կույսերը, մայրապետ Օլիմպիայի գլխավորությամբ:

Վանքի փառավոր եկեղեցին հիմնական վերանորոգության մեջ է: Նորին Ս. Օծությունը ծանոթանում է կատարվող աշխատանքներին, դիտում վանքի թանգարանը և ձեռագրերը, որոնք գեղարվեստական բարձր մակարդակի արժեքներ են հանդիսանում:

Ապա տեղի է ունենում ճաշկերույթ վանական հանդիսության սրահում, մեծ խնամքով պատրաստված ծրաջան կույսերի ձեռքով:

Ճաշի ընթացքում փոխանակվում են բաժակաճառեր:


Հայ Եկեղեցու պատվիրակության անունից գեղեցիկ ճառ են արտասանում Տ. Հուսիկ եպիսկոպոս Ամբուրյանը, ապա Յաշի միտրոպոլիտի տեղակալ Իրինեու վարդապետը և նեստոր վարդապետը:

Նորին Ս. Օծության օրհնությամբ փակվում է սեղանը:

Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով և ուղեկիցներով, ուղղվում է դեպի Սուլավայի կայարանը, գնացքով մայրաքաղաք վերադառնալու համար, ուր հասնում է կեսգիշերին:

Հունիսի 26-ին, շաբաթ, Վեհափառ Հայրապետը, առավոտյան ժամը 10-ին, այցելություն է տալիս Բուխարեստի հայոց գերեզմանատան, իր շքախմբի և Անտիմ սրբազան եպիսկոպոսի ու Հայր Օլիմպ Բաշուլայի ուղեկցությամբ: Գերեզմանատանը հավաքվել էր հայ հավատացյալների հոծ բազմություն:

Նորին Ս. Օծության հանդիսադրությամբ, Մելիք ընտանիքի կառուցած գերեզմանատան մատան մեջ, տեղի է ունենում հոգեհանգստյան կարգ, գերեզմանատան մեջ



ԳՈՒԴԱԼՈՒՄԻ ՆԱԿՈՅ Ա. ՆՐԵՇԱՆԱԿՈՒՄԵՏԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

թաղված բոլոր ննջեցյալների հիշատակին, որոնց շարքում է գտնվում նաև թեմի հանգուցյալ առաջնորդ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի աճյունը, ամփոփված մատան գետնահարկ դամբարանում:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցի է գնում Իր հոր՝ Արքահամ Պալեյանի գերեզմանին և նորոգ վախճանված իր վաղեմի սրտակից ընկերոջ՝ Ժիրայր Գարգաշյանի հողակույտին, ի ներկայության սգակիր ընտանիքի անդամների: Վեհափառ Հայրապետը այցելում է նաև հայտնի հայագետ պրոֆ. Վլադ Բընդեանուի և բարերար Հովսեփ Տուայանի գերեզմանները:

Հետմիջօրեի ժամը 5-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Բուխարեստի ուսումնասնվածաբանական ակադեմիայում կազմակերպվում է մեծ համերգ, մայրաքաղաքի ուսման քահանաների երգչախմբի և Պատրիարքարանի Մայր Տաճարի երգեցիկ խմբերի կատարումով: Քահանաների երգչախումբը կատարում է զուտ կրոնական երաժշտության մի ծրագիր, Հայր Խ. Ռունկուի ղեկավարությամբ: Համերգի երկու բաժիններն էլ կատարվում են բացառիկ հաջողությամբ, գեղարվեստական բարձր մակարդակի վրա:

Համերգին ներկա են նաև Ամենապատիվ Տ. Ժուստինիան Սրբազան Պատրիարքը, շրջապատված բարձրաստիճան հոգևորականներով, պրոֆ. Գ. Գոկարուն իր պատասխանատու գործակիցներով, ինչպես նաև սովետական ղեսպանատան երկու ներկայացուցիչներ:

Համերգին ներկա են նույնպես աստվածաբանական ակադեմիայի վերատեսուչը, դասախոսներ, քահանա հայրեր, իսկ Հայ Եկեղեցու կողմից՝ թեմական խորհրդի և եկեղեցական խորհրդի անդամներ, գլխավորությամբ ղոկտ. Գրիգոր Բամբուլեյանի, նկարիչ Հրանտ Ավագյանի, փաստաբան Արամ Հակոբի և Գևորգ Գևորգյանի:

Ներկա են նաև բազմաթիվ ուսման և հայ հավատացյալներ:

Նույն օրը, երեկոյան ժամը 7.30-ին, Վեհափառ Հայրապետը հայոց եկեղեցում նախագահում է կիրակիամսի ժամերգությունը:

Երեկոյան, ավելի ուշ, առաջնորդարանի դահլիճում, թեմի առաջնորդը և թեմական խորհուրդը կազմակերպում են ճաշկերույթ, ի պատիվ Վեհափառ Հայրապետի և ուսման բարձրաստիճան հոգևորականների, որոնք եկեղեցում ներկա են եղել արարողության:

Սեղանի շուրջ խոսք են առնում Տ. Տիրայր սրբազանը, Տ. Անտիմ եպիսկոպոսը և ղոկտ. Գրիգոր Բամբուլեյանը:

Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունները բաշխելով ներկաներին:

Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ հայոց եկեղեցում

Հունիսի 27-ին, կիրակի, առավոտյան վաղ ժամերից, հայ հավատացյալների մեծ բազմությունը լցրել էր Բուխարեստի հայոց եկեղեցին և շրջափակը:

Ուղիղ ժամը 10-ին, ուսման Պատրիարքարանից ժամանում է Վեհափառ Հայրապետը իր շքախմբի անդամներով, և առաջնորդարանում զգեստալորված, հանդիսավոր թափորով մուտք է գործում եկեղեցի, մատուցելու սուրբ պատարագ:

Սեղանին սպասարկում են Տ. Հուսիկ, Տ. Տիրայր եպիսկոպոսները, Տ. Գևորգ վարդապետը և Տ. Զարեհ արեղան:

Հայրապետական պատարագին ներկա են նորին Սրբություն Տ. Ժուստինիան Պատրիարքը իր շքախմբով, դավանությանց ներկայացուցիչներ, ուսման բարձրաստիճան հոգևորականներ և հյուրեր:

Պատարագի երգեցողությունը կատարվում է հմտությամբ և ճաշակով Արա Մանաշի ղեկավարությամբ. մեծ արվեստով մեներգում են Արաֆա Սվաբյանը, Կարպիս Զուպյանը, Անահիտ Քերբիշյանը, Մելինե Փոլադյանը և Նվարդ Թումաջանյանը, երգահոների ընկերակցությամբ Սեդա Գարգաշյանի:

Վեհափառ Հայրապետը, «Հայր մեր»-ից առաջ, խոր ապրումներով համակված, ուսման լեզվով իր եղբայրական սերն է արտահայտում և իր գնահատանքն ու երախտագիտությունը Ժուստինիան սրբազան Պատրիարքին, Ռումեն Եկեղեցուն, պետական իշխանությունաց, այն ջերմ ընդունելությանց համար, որը վայելից ուսման հողի վրա, որպես հյուրը Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու: Վեհափառ Հայրապետն ընդգծում է.

«Միայն Տերը պիտի կարողանա Մեզ օգնել, որպեսզի բանիվ և գործով կարենանք Մեր գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնել Ձերդ Սրբության, հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հանուն հայ հավատացյալ ժողովրդի:

Նման առիթներով դիմ հռոմեացիք ասում էին. «Այս օրը թող արձանագրվի սպիտակ մարմարի վրա»: Մեզ համար ավելին ևս, Մենք ցանկանում ենք, որ այսօրը արձանագրվի մեր բոլորի հոգիների մեջ և նրա լուսավոր հիշատակը փոխանցվի ապագա սերունդներին»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հայերեն լեզվով խանդավառ քարոզ է խոսում, ոգեկոչելով հիշատակը ապրիլյան եղեռնի



Ամենապատիվ Ս. Ժուլտինիան Պատրիարքը Բուխարեստի հայոց եկեղեցում

նահատակների և ներկա վերածնունդը հայ ժողովրդի, հայրենի հողի վրա:

Վեհափառ Հայրապետը խոսում է նաև Բուխարեստի Հայ Եկեղեցու և հայ համայնքի փառավոր անցյալի մասին, հիշելով, որ լրացել են 50 տարիները, երբ Բուխարեստում, հին եկեղեցու հիմքերի վրա, կառուցվել է այսօրվա առաջնորդանիստ հոյաշեն եկեղեցին, հայկական ճարտարապետական ոճով:

Ի նշումն այս հիշատակի, Վեհափառ Հայրապետը թեմի առաջնորդ Ս. Տիրայր եպիսկոպոսին հանձնում է Ս. Էջմիածնից բերված մի խաչքար, այն դետեղելու համար եկեղեցում մի հարմար տեղ:

Վեհափառ Հայրապետն իր խոսքը վերջացնում է ջերմագին մաղթանքներով և օրհնությամբ:

Սուրբ պատարագի վերջավորության, խոսք է առնում Ամենապատիվ Ս. Ժուլտինիան Պատրիարքը, իր ապրումներն արտահայտելով հայոց սուրբ պատարագի ունկնդրության առթիվ և իր ջերմ սիրտ խոսքն ուղղելով Հայոց Հայրապետին ու իր հայրական օրհնությունները բաշխելով հայ հավատացյալներին:


Հավարտ սուրբ պատարագի, նույն հանդիսությամբ, երկու հայրապետները բարձրանում են առաջնորդարան, ուր միասին ստորագրում են հատուկ պատրաստված հիշատակության մագաղաթը, նվիրված երկու հայրապետների հանդիպմանը հայոց եկեղեցում, նրա կառուցման 50-ամյակի առթիվ:

Ժամը 6-ին, հայոց եկեղեցում, Վեհափառ Հայրապետի հանդիսարությամբ, կատարվում է հոգեհանգիստ, ի հիշատակ հայոց մեծ եղեռնի նահատակների:

Այնուհետև կատարվում է կրոնական համերգ, մասնակցությամբ եկեղեցու երգչախմբի, ղեկավարությամբ Արա Մանաշի:

Հոգեհանգիստը և հաջորդող հոգևոր համերգը տեղի են ունենում խուռներամ բազմության ներկայության, խոր հոգևոր ապրումների հուզիչ մթնոլորտում:

Սույն հանդիսության սկզբում Ս. Տիրայր եպիսկոպոսը ոգեկոչում է հիշատակը հայ ժողովրդի շուրջ 2 միլիոն նահատակների 50 տարի առաջ, երբ գրեթե նույն տարիներին Ռումինիայի հայ հավատավոր ժողովուրդը սույն տաճարը կառուցեց, իբրև հայ հավատի և հոգու հաղթության կոթող:



ՎԵՆԵՏԻԱՆԻ ԶԱԳՐԱԿՈՒԵՑԸ, Տ. ԺՈՒՍԵՖԻՆԻ ՄԻՏՐՈՒՆԻՍԻՆԻ ՄԻՏՐՈՒՆԻՍԻՆԻ ԵՎ ԱՆՏԻՄ ԵՊԻՍԿՈՒՊՈՍԸ ԶԱՇԻ ՄԵՏՐՈՒՆԻՍԻՆԻ ՊԱՍՏՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Երկկողման ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետի պատվին, մեծ ճաշկերույթ է կազմակերպվում թեմական խորհրդի և Բուխարեստի հայ համայնքի կողմից, «Մայիս մեկ» ճաշարանի մեծ դահլիճում:

Ճաշկերույթին մասնակցում են Ռուսիայի Եկեղեցու բարձրատիճան հոգևորականներ, գլխավորությամբ Անտիմ սրբազան եպիսկոպոսի և Պատրիարքարանի խորհրդականներ Սուարե և Օլիմպ հայրերի:

Սեղանների շուրջ հավաքվել է շուրջ 200 հոգի հայ համայնքից, գլխավորությամբ թեմական խորհրդի և եկեղեցական վարչության անդամների ու պաշտոնակատարների:

Ճաշկերույթին ընթանում է շափազանց ջերմ և խանդավառ մթնոլորտում:

Բաժակաճառեր են արտասանում Անտիմ եպիսկոպոսը, Տիրայր եպիսկոպոսը, Հուսիկ եպիսկոպոսը, Հայր Օլիմպ Քաչուպան, դպր. Գրիգոր Բամբուխյանը, Վահագն Ճանպետենյանը, Գևորգ Գևորգյանը և Քրիստի Օղաբաշյանը:

Այս առթիվ Հ. Ճ. Սիրունին կարդում է հետևյալ գեղեցիկ ճառը.

«Վեհափառ».

Քսան և ավելի տարիներ հետո, երբ առաջին անգամ է, որ հայ բառերը կուգան սիրտս պարպել հայերու, շրթունքներս կարծես կզուգան. բայց քաղցր մթնոլորտը, որ Ձերդ Վեհափառության շուրջը ստեղծված է հիմա հոս, ջերմությամբ կլեցնես սիրտս, ուժ կուտա շրթունքներուս, ու թույլ չի տար, որ բաժակը դողդղա ձեռքիս մեջ:

Ձեր ներկայությունը դիս կվերստեղծե: Ու հազար հիշատակ ու հազար մտածում կտողանցեն մտքիս մեջ, երբ Ձեզ բազմած կտեսնեմ այս սեղանին գլուխը, ու երբ կփորձեմ Ձեզ ողջունել հանուն անոնց, որոնք Ձեր քայլերուն հետևեցան, անոր բոլոր հանգրվաններուն մեջ:

Հանուն անոնց, կողջունեմ Ձերդ Վեհափառության այցը մեզի. ան միայն այցելությունը չէ Հոգևոր Պատի մը, որ Արարատեն ու էջմիածնեն, հայոց արևեն ու հայ ավերակներեն, հայ հոգեն ու հայ տքնութենեն ողջուն բերելու եկած է մեզի. ան այցն է նաև սիրելի մը, որ իր մանկությունը որոնել կուգա այս փերուս վրա, որոնել օրրանը, ուրկե ճամբա ելավ Ան, ուխտի, նվիրման, ճիգերու ուղին, ուրկե քալեց Ան, մեծ տեսիլքները, որոնք իր կյանքի բոլոր հանգրվաններուն բողբոջեցան իր ներսը, ու բարի ձեռքը նախախնամության, որ հետևեցավ միշտ իրեն հանգրվան առ հանգրվան, ու տարավ զԱյն, բեզմեցուց Լուսավորչի Գահին:

Բարի՛ եկաք: Ձեր գալուստը կզուգադիպի երկու հիսնամյակներու: Հիսնամյակն է նախ փառաշուք այն տաճարին, որ Բուքրեշի հայ եկեղեցին է, և որ Ռուսմանիո մայրաքաղաքին մեջ կկանգնի իբրև խորհրդանշանը հայ ժողովուրդի մոլեգին սիրույն դեպի իր պայերուն հավատքը: Հայ Եկեղեցին, ինչպես ամենուրեք, Դրամովիցայի փերուն վրա ևս հետևած է աղետներեն փախող հայ բարավաններուն, տարածելու համար իր հովանին անոնց բեկորներուն վրա. ու այդ հովանին դարեր դիմացուցեք է այդ բեկորները, և ո՛վ փախեր է այդ հովանին, հեղեղեն քշվեր է շուտով: Նույն այս տաճարին մեջ է, որ Ձերդ Վեհափառության հոգին թրծվեցավ Հայ Եկեղեցիին հետ, ու մտերմացավ անոր ավանդություններուն:

Այս տարին երկրորդ հիսնամյակ մը ևս ունի: Հիսուն տարիներ մեզ կբաժենես եղբրական այն դիշերեն, երբ ճիվաղը հայ մտավորականության դուռը բախեց, շարաշուք մանգաղն ի ձեռին: Ու այդ դիշերեն ի վեր, ապրիլ 24-ը խորհրդանշանը մնաց այն զարհուրելի եղեռնին, որուն նմանը հազիվ թե արձանագրած ըլլա ժողովուրդներու պատմությունը, և տեղին էր հետևաբար, որ սուգի տարի հուշակեր մեր այս տարին, հոգիով ու սրտով դրված Ձեր գեղեցիկ կնիզակը:

Պատի շուգի արցունք ալ խառնել մեր բաժակներուն: Բայց չէի կրնար մեծ մեռելներուն հիշատակը չոգեկոչել հոս, նվիրական պահու մը, երբ Տերը իմ շրթունքներս բացավ, և մաղթելու համար, որ լացի պատ մը ըլլա ան մեզի, որպեսզի անոր առջև խմբվելու դանք ոչ միայն հոբելյանե հոբելյան, այլ ամեն տարի և տարվան բոլոր օրերը, արժարծելու համար մեր ներսի կրակը, զոր մեռելները ավանդեցին ողջերուն, և անոր փարած՝ քայլելու համար փառքի անհաս բարձունքին:

Հայ ժողովուրդը փառքի այդ անհաս բարձունքն է, որ կմագլցի դարերով, հպարտ այն առաքելության համար, զոր նախախնամությունը բաժին հաներ է իրեն, զմայլելի կոթողներուն և գոհարներուն համար, որոնցմով պճներ է իրեն շնորհված դարերը, և նաև խութերուն համար, զորս կոխտտեր է, իր տքնության, իր մաքառումներուն, իր քրտինքին համար:

Հպարտ ինչպես իր ճիգերուն, նույնպես իր տառապանքներուն և իր սուգին մեջ, հպարտ, որովհետև եթե հայ ծնիլը դժբախտություն է և հայ մնալը հաղթանակ, ինչպես ըսեր է մեծ բանաստեղծը, հայ ըլլալը հպարտություն ալ է և փառք:

Այդ գիտակցությամբ, խմենք ուրեմն նախ Ձեր կենացը համար, ու այն սրբազան



Շրջապտույտ Կոնստանցայի բացօդյա թանգարանում

օթևանին, որ էջմիածինն է, և ուր իրենց պաշտամունքը մատուցին հայ ժողովուրդի բոլոր դարերը իրենց Աստուծուն:

Խմե՛նք նվիրական այն լեռան համար, որ հայ ժողովուրդի ճակատագրին կհսկե դարերն ի վեր, և որուն ստորոտեն քանի՛-քանի՛ ցեղեր անցան գլխահակ, առանց համարձակելու անոր կատարը հանել իրենց հոգին:

Խմե՛նք Հայրենի Հողին համար, որուն ծոցը կապրին մեր մեռելներն ու մեր ավանդությունները, և ուր հայ ժողովուրդը քրտինք կթափե այսօր, հոխորտ նայելով գալոց դարերուն:

Խմե՛նք և այն ժողովուրդներուն համար, որոնք մեզ ապաստան տվին մեր դժնդակ օրերուն, որպիսին ռուսներն ժողովուրդն է, որուն ճիգերուն խառնեցինք մեր ալ քրտինքը, և որուն հողին մեր ալ հոգիեն սերմ նետեցինք բուռ-բուռ:

Խմե՛նք այն անուշ բարբառին համար, որ ամոքած է մեզ մեր տառապանքներուն մեջ, քաղցրացուցած է մեր գերությունը, ու հորիզոն է բացած մեր մտքին ու սրտին առջև:

Խմե՛նք այն համեստ բայց վսեմ ժողովուրդին համար, որ մերն է, որ դարերուն ծոցեն խրոխտ կբալն բոլոր աղետներն ու սուգերը հեզնելով, իր անցքին վրա լույս ու ծաղիկ ցանելով:

Խմե՛նք և այն վսեմ ուխտին համար, զոր մեր մեռելները մեզի կտակ թողուցին, որպեսզի շղեղեկիք փորձության պահուն, ու միշտ թարմանանք վերելքի մեր մեծ ճիգին մեջ դեպի փառքի մեծ ճամբան:

Խմե՛նք հայ ծնած ըլլալու փառքին և հայ ապրած ըլլալու հպարտության համար:

Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, ընդգծելով Ս. էջմիածնի նախախնամական դերը հայ ժողովրդի կյանքում և նրա ի գործ դրած ճիգերը, տարած աշխատանքը մեր օրերի պայմանների մեջ, Հայաստանից ներս և ի սփյուռու աշխարհի, հայ հոգևոր կյանքի ամրապնդման և համայն հայ հավատացյալ ժողովրդի միասնության պահպանման ի խնդիր:

Ամփոփ խոսքերով Վեհափառ Հայրապետը հիշում է նաև Ս. էջմիածնում կատարված շինարարական աշխատանքները, ինչպես նաև Հայաստանում մի շարք վանքերի և եկեղեցիների վերանորոգումը:

Նորին Ս. Օծությունը սեղանը փակում է իր հայրապետական օրհնություններով:

Վեհափառ Հայրապետը Կոնստանցայում

Հունիսի 28-ին, երկուշաբթի, համաձայն կազմված ծրագրի, Վեհափառ Հայրապետը, առավոտյան ժամը 6-ին, մեկնում է դեպի



Վեհափառ Հայրապետը Բուխարեստի հայոց առաջնորդարանում պատրիարքական փոխանորդ Ս. Անտիմ, Ս. Լուսիկ եպիսկոպոսների և Լ. Ճ. Սիրունու հետ:

Կոնստանցա իր շքախմբով և ուղեկցութեամբ Ս. Ժուստինիան Սրբազան Պատրիարքի փոխանորդ Ս. Անտիմ եպիսկոպոսի և Պատրիարքարանի խորհրդական Լ. Օլիմպ Քաչուլայի: Կոնստանցայում նորին Վեհափառութեան դիմավորում են Դանուբի շրջանի եպիսկոպոս Կեզարիե սրբազանը իր շքախմբով, ինչպես նաև տեղի դավանութեանց ներկայացուցիչ պր. Բաղուեսելուն: Դիմավորելու են եկել նաև տեղի հոգևոր հովիվ Ս. Մեսրոպ Բախանան, տեղական եկեղեցական վարչութեան անդամներ և հայ հավատացյալներ:

Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով և ուղեկիցներով, Կեսարիե եպիսկոպոսի առաջնորդութեամբ, ավտոմեքենաներով մի պտույտ է կատարում ծովեզրերի շրջանում և այցելում է Սև ծովի զեղածիծաղ ափերը՝ Մանգալիայի, էֆորիայի և Քեբիրգյուլի, ուր և կանգ են առնում ավտոմեքենաները: Այստեղ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է ուսման Պատրիարքարանի հատուկ բուժարան-հանգստարանի շենքը, որտեղ բոլորին հատկացվում են հատուկ հարկաբաժիններ:

Քեբիրգյուլի այս հանգստավայրի ճաշարահում Կեսարիե սրբազան եպիսկոպոսը կազմակերպում է պաշտոնական ճաշկերույթի պատիվ Հայ եկեղեցու պատվիրակության:

Բացի Վեհափառ Հայրապետի շքախմբից և ուղեկիցներից, ներկա են նաև Տիտ-Սիմեոնի սրբազան եպիսկոպոսը և Վալերիան սրբազան եպիսկոպոսը, ինչպես նաև տեղական իշխանության ներկայացուցիչներ:

Ճաշկերույթի ընթացքում փոխանակվում են ողջույնի ճաներ Կեզարիե եպիսկոպոսի և Վեհափառ Հայրապետի միջև:

Հետմիջօրեի ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով և ուսման բարձրաստիճան հոգևորականների ուղեկցութեամբ, հանդիսավոր թափորով մուտք է գործում Կոնստանցայի ուսմանական Մայր Տաճարը, հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ:

Կեզարիե եպիսկոպոսը խանդավառ ճառով ողջունում է Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունը Կոնստանցա քաղաքը և խնդրում Նրա օրհնությունը ներկա հավատացյալ ժողովրդի վրա:

Վեհափառ Հայրապետը խոսք առնելով, իր գոհունակությունն է հայտնում, որ գտնվում է այս հոյակապ տաճարում և իր հիացմունքն է արտահայտում ուսմանական ոճով կատարված եկեղեցու ներքին որմանկարչության մասին, իրագործված այնքան յուրահատուկ արվեստով, վերջին երեք տարիների ընթացքում: Վեհափառ Հայրապետը

սիրով օրհնում է հավատացյալներին, բարի մաղթանքներով հանդերձ:

Ապա Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ բարձրաստիճան հոգևորականների, այցելում է Կոնստանցայի հոռմեական հնությունների նշանավոր թանգարանը, որից հետո ուղևորվում է դեպի քաղաքի հայոց եկեղեցին: Այստեղ Վեհափառ Հայրապետին սպասում է Կոնստանցայի հայութունը հոծ թվով: Նորին Ս. Օծությունը «Հրաշափառ»-ով մուտք է գործում եկեղեցի և մաղթանքի արարողությունից հետո, տեղի հոգևոր հովիվ Տ. Մեսրոպ Բաբուջյանը բարի գալստյան մի գեղեցիկ ճառով ողջունում է Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը:

Վեհափառ Հայրապետը հուզումնալի խոսքով պատասխանում է, իր սերն ու կարոտը հայտնելով դեպի Կոնստանցայի հայութունը: Մի անգամ ևս նա իր շնորհակալությունն է հայտնում նորին Սրբություն Ժուստինիան Պատրիարքին և անկեղծ գնահատանքի խոսքեր ուղղում Կեզարիե և Անտիմ սրբազան եպիսկոպոսներին: Վեհափառ Հայրապետը իր խոսքը վերջացնում է ջերմ օրհնություններով, բերած Մայր Աթոռ Ս. Էջմիածնից և Հայոց աշխարհից:

Ապա Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով և ուղեկիցներով, այցելում է ծովեզերյա Մամայայի նշանավոր շրջանը, հիացումով դիտելով վերջին 10 տարիներին այստեղ կառուցված հարյուրավոր հանգստարան-բուժարանների բազմահարկ, հսկա շենքերը, գեղեցիկ և նորագույն ոճով և օժտված ամեն հարմարություններով:

Ընդունելություն ի պատիվ Հայոց Հայրապետի

Երեկոյան ժամը 7-ին, Կոնստանցա քաղաքի մեծ կազինոյի շքեղ դահլիճում, եկեղեցական վարչությունը և հայ համայնքը մեծ ճաշկերույթ են կազմակերպում Վեհափառ Հայրապետի պատվին: Ներկա է մոտ 150 հոգի Կոնստանցայի հավատացյալներից, գլխավորությամբ եկեղեցական վարչության անդամների: Ներկա են նաև տեղական իշխանության ներկայացուցիչներ: Ծաշկերույթի ժամանակ բաժակաճառեր են արտասանում թեմական խորհրդի անդամ և տե-




Առաջնորդ Տ. Տիրայր եպիսկոպոսը Բուխարեստի հայոց եկեղեցում

ղի հայտնի իրավաբան-փաստաբան Արամ Հակոբր, Կեզարիե և Անտիմ սրբազան եպիսկոպոսները, Տիրայր եպիսկոպոսը: Ընդունելության վերջում խոսք է ասնում Վեհափառ Հայրապետը, բաշխելով իր օրհնությունները բոլոր ներկաներին:

Պաշտոնական հաղորդագրության ստորագրում

Հունիսի 29-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով վերադառնում է մայրաքաղաք:

Նույն օրը, երեկոյան ժամը 7-ին, Պատրիարքարանի հանդիսավոր նիստերի դահլիճում, նորին Սրբություն Ժուստինիան Պատրիարքը և Վեհափառ Հայրապետն ստորագրում են հետևյալ հաղորդագրությունը, ի ներկայության ուսման և հայ բարձրաստիճան հոգևորականների և հայոց թեմի եկեղեցական մարմինների ներկայացուցիչների.



Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպված ընդունելությանց ծրագրեր

«ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՄԵՆ ՕՐԹՈՂՈՐՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՅ ԱՌԱՐԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ռումինիայի Պատրիարխ Նորին Սրբություն ժուստինիանի հրավերով, 17 հունիսից 3 հուլիս 1965 թ., Նորին Սրբություն Վազգեն Ա, Մայրազույն Պատրիարխ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բարեկամական այցելություն տվեց Ռումեն Օրթոդոքս եկեղեցուն:


Նորին Սրբություն Վազգեն Ա-ին ընկերակցում էին գերազնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթրույանը՝ առաջնորդ Ադրբեջանի հայոց թեմի, գերազնորհ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը՝ առաջնորդ Ռումինիայի հայոց և հոգեւորհ Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը:

Առաջին այցելությունն է, որ տալիս է Ռումեն Օրթոդոքս եկեղեցուն մի հայ Կաթողիկոս և արևելյան քրիստոնյա եկեղեցիների գահակալներից մին: Մույն այցելությունը տեղի է ունենում էկումենիկ ոգով, որով առաջնորդված են այսօր քրիստոնյա եկեղեցիները:

Ռումինիայում Նորին Սրբությունը, Իր ուղեկիցների հետ միասին, այցելեց Ռումեն Պատրիարխարանի կենտրոնական հաստատությունները և որոշ եկեղեցական հիմնարկություններ՝ Բոլխարեստի և Յաշի արհեստակապասարանները և Ռումանի և Դանուբի եպիսկոպոսարանները:

Այս այցելության առթիվ Նորին Սրբությունը առիթն ունեցավ ծանոթանալու աստվածաբանական ուսմանց ընթացքին, ինչպես նաև ճանաչելու վանքեր ու եկեղեցիներ և կրոնական արվեստի հին կոթողներ Մունտենիայում, Մոլդովայում և Դաբրուջայում, ներկա լինելով եկեղեցական պաշտամունքներին և մտախց հարաբերության մեջ մանելով ուսման օրթոդոքս հավատացյալների եկեղեցական կյանքի հետ:

Նորին Սրբությունն այցելեց նաև Բոլխարեստի, Յաշի, Բագրուի, Ռումանի, Մուչավալի և Կոնստանցայի հայ եկեղեցիների հավա-



Ռումեն և Քայ եկեղեցական Պետերի համատեղ հաղորդագրության բնագիրը

տացյալներին, նախագանելով կրոնական ա-
րարողություններին և բաշխելով հոգևոր հոր-
դրերը:

Ռումեն ժողովրդական Հանրապետության
մեջ կատարած իր հանապարհորդության ըն-

թացքում, նորին Սրբությունն այցելեց, ի
միջի այլոց, Պոնդաի արդյունաբերական
շրջանը, Բիգազի երկտրակայանը, Սև ծովի
ափը, հիացումով հաստատելով ուսմեն ժո-
ղովրդի մեծ իրագործումները վերջին տա-

իներին: Բարձրաստիճան Հյուր և Իր ողբ-
կիցները ամեն տեղ դիմավորվեցին ջերմ ըն-
դունելությամբ:

Նորին Սրբություն Վազգեն Ա-ը այցելու-
թյուն կատարեց նաև Նախարարաց խորհրդ-
արանի առընթեր Դավանությանց բաժանմուն-
քին, ուր սրտագին գրույց ունեցավ բաժան-
մունքի ընդհանուր ֆարտուղար պր. պրոֆ.
Ռուսիարու Դոկարուի հետ:

Հայ եկեղեցու պատվիրակության և Ռու-
սիայի Օրթոդոքս եկեղեցու Ս. Սիմոնի անդամ-
ների միջև Բուխարեստում կայացած ժողո-
վում, եղբայրական մթնոլորտում, երկու
կողմից էլ արտահայտվեց ցանկություն ա-
ռավել սերտ գործակցության ժամանակա-
կից մարդկության առաջադիմության և խա-
ղաղ գոյակցության հարցերում և ընդգծվեց
անհրաժեշտությունը փոխադարձ հանդի-
պումների և առավել խոր հանաչման Ռուսի-
այի Օրթոդոքս և Հայ եկեղեցիների միջև, որով

Ժ Ո Ի Ս Տ Ի Ն Ի Ա Ն

Պատրիարք Ռուսիայի

հանապարհը կբացվի արդյունավետ հարա-
բերությունների դեպի նրանց միությունը:


Այս այցելության առթիվ նորին Սրբու-
թյուն Վազգեն Ա. Իր բոլոր արտահայտու-
թյունների և խոսքերի մեջ վկայեց Իր սիրո,
գնահատանքի և երախտագիտության մասին
դեպի ռուսներ հայրենիքը և ժողովուրդը, որի
ծոցում ծնվել է, որի մշակույթին հաղորդվել
է և ուր գործել է մինչև 10 տարի առաջ, երբ
կոչվեց Հայ Առաքելական եկեղեցու բարձ-
րագույն ղեկավարության պաշտոնին:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբու-
թյուն Վազգեն Ա-ի Ռուսիայի այցելությունը
ներկայացնում է մի նոր և կարևոր նպաստ
ֆրիստանեսական էկումենիզմի օգտին, երկու
եկեղեցիների հարաբերությունների խորաց-
ման և մեր ժողովուրդների ավանդական կա-
պերի սերտացման գործում:


Վ Ա Զ Գ Ե Ն Ա

Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս
Ամենայն Հայոց

2 հուլիսի 1965 թ.
Բուխարեստ:



Ա. Գալանեի տաճարը (Նվեր նկարիչ Հրանտ Ավագյանից)



Նատուր-մորտ (Նվեր Եկարիչ Ասլանյանից, Սոֆիա)

Հունիսի 30-ին, շոբեֆշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Դավանությունների բաժանմունքի պետ պրոֆ. Դումիտրու Դոկարուն, հայոց առաջնորդարանի դահլիճում, Հայոց Հայրապետին պաշտոնական այցի է գալիս՝ Վեհափառ Հայրապետի և պրոֆ. Դոկարուի միջև տեղի է ունենում սիրալիր և մտերմական զրույց սրտագին մթնոլորտում:

Վեհափառ Հայրապետի նախագահությամբ թեմական խորհրդի նիստ

Հունիսի 30-ից մինչև հուլիսի 2-ը, Վեհափառ Հայրապետը, ցերեկվա ժամերին, լինում է հայոց առաջնորդարանում, ուր հանդիպումներ և խորհրդակցություններ է ունե-

նում թեմական խորհրդի, եկեղեցական վարչության անդամների և պաշտոնյաների ու ռեյտր կյանք» թերթի խմբագրական կազմի հետ: Այդ օրերին Վեհափառ Հայրապետն ընդունում է նաև բազմաթիվ ոտամինահայ ազգայինների, որոնք կարոտով և սիրով եկել էին մի անգամ ևս օրհնությունը առնելու իրենց նախկին առաջնորդի:

Հուլիսի 2-ին, կեսօրից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հայոց առաջնորդարանում, տեղի է ունենում խորհրդակցական նիստ հոգևոր դասի, թեմական խորհրդի, եկեղեցական վարչության և պաշտոնեության, գլխավորությամբ թեմի առաջնորդ Ս. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանի:

Թեմակալ առաջնորդ սրբազանը, նիստը բացելով, իր անսահման երախտագիտությունն է հայտնում Հայոց Հայրապետի Ռումինիա այցելության առթիվ և համայն ուսմինահայ ժողովրդի սերն ու հավատարմությունը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Նրա Գահակալը Ապա Տ. Տիրայր եպիսկոպոսը հակիրճ կերպով զեկուցում է Վեհափառ Հայրապետին իր և թեմական խորհրդի գործունեության մասին: Իր խոսքի մեջ սրբազանը երախտագիտություն է հայտնում ուսմին պետական իշխանություններին և Դավանության բաժանմունքի հարգարժան ընդհանուր քարտուղարին, Հայոց Հայրապետի այցելության առթիվ ցույց տրված խորունկ ուշադրության և հարգանքի համար: Այնուհետև սրբազանը իր գնահատանքն է հայտնում իրեն գործակից-հանդիսացող թեմական և եկեղեցական մարմինների անդամներին ու պաշտոնեության համագործակցության և աջակցության համար ի նպաստ թեմի ազգային-եկեղեցական կյանքի բարվոք առաջընթացի: Նիստի ժամանակ խոսք են առնում նաև թեմական խորհրդի ատենապետ դոկտ. Բամբուխյանը և եկեղեցական վարչության ատենապետ Գևորգ Կեռքյանը:

Վերջում, Վեհափառ Հայրապետը խոսք առնելով, Իր անկեղծ գոհունակությունն է հայտնում Ռումինիայի հայոց թեմի կողմից այնքան անթերի կերպով կազմակերպված ընդունելությունների և հյուրասիրությունների համար և ջերմ գնահատանքի խոսքեր ուղղում թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր սրբազանին, թեմական խորհրդին և Բուխարեստի եկեղեցական վարչության: Նիստը փակվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում

Թեմական խորհրդի նիստից հետո, Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է եկեղեցի, ուր հայ հավատացյալների մեծ բազմություն է հավաքվել, հայցելու Վեհափառ Հայրապետի վերջին օրհնությունը: Պաշտովում է երեկոյան հանդիսավոր ժամերգու-

թյունը, որի ավարտին Վեհափառ Հայրապետը, հայտնապես հուզված, հրաժեշտի իր հուզումնալից խոսքն է ասում ժողովրդին և օրհնությունները բաշխում իր սիրեցյալ հոտին: Եկեղեցու շրջափակում հավաքված խուռներամ հայ հավատացյալների ծափողջույնների և եկեղեցու զանգերի ղողանջի տակ, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցուց և իր հարազատ ժողովրդից:

Հուլիսի 3-ին, շաբաթ, Վեհափառ Հայրապետի Բուխարեստ այցելության վերջին օրն է:

Առավոտյան, Վեհափառ Հայրապետը և ժուստիեիան Սրբազան Պատրիարքը, իրենց շքախմբերով, հանդիսավորապես մեկնում են դեպի Բուխարեստի միջազգային Բանեասա օդանավակայանը:

Նորին Ս. Օծություն Վազգեն Ա Կաթողիկոսին բարի ճանապարհ մաղթելու համար, օդանավակայանում են գտնվում բարձրաստիճան հոգևորականներ, ուսմին քահանաների մի մեծ խումբ, ինչպես նաև Հայ Եկեղեցու հոգևոր դասը և թեմական ու եկեղեցական վարչությունների բոլոր անդամները և բազմահարյուր ժողովուրդ, գլխավորությամբ թեմի առաջնորդ Տ. Տիրայր սրբազանի:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ողջերթ են մաղթում Դավանությունների բաժանմունքի պետ պրոֆ. Դումիտրու Դակարուն, արտաքին գործերի մինիստրության ներկայացուցիչ ամբաստոր Դիոնիսիե Յունեսկուն, դավանությունների տնօրեններ Ի. Օնցանուն և Կ. Նեկչուն, ինչպես նաև սովետական դեսպանատան ներկայացուցիչներ:

Մեկնումի վերջին պահն է: Ընդհանուր հուզման և խանդավառության մեջ, երկու քույր եկեղեցիների Պետերը ողջագուրվում են եղբայրական մաքուր սիրով, միմյանց վերստին հանդիպելու քաղցր իղձով համակված: Քիչ հետո, ինքնաթիռը բարձրանում է եթեր, ուղղություն վերցնելով դեպի Մոսկվա, բոլոր ներկաների բարեմաղթությունների և ծափողջույնների տարափի ներքո:

Բարի ճանապարհ Հայոց սիրելի Հայրապետին:

